



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## ՀՀԴ մամուլի խորհրդածողովի հաղորդագրությունը

2021-թ. հոկտեմբերի 17-18-ին Երևանի «Արամ Մանուկյան» կենտրոնում տեղի ունեցավ ՀՀԴ մամուլի խորհրդածողով: Խորհրդածողովին մասնակցում էին ՀՀԴ Բյուրոյի ներկայացուցիչը և անդամները, ՀՀԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամները, ՀՀԴ մամուլի դիվանն ու հանրային կապերի և քարոզչական գրասենյակի աշխատակիցները, ՀՀԴ աշխարհատարած կառույցի մամուլի խմբագիրները և շրջանների հանրային կապերի պատասխանատուները, սոցիալական ցանցերի մասնագետները:

Քանի որ խորհրդածողովը տեղի էր ունենում Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, բնականաբար, իբրև համահայկական հրատապ օրակարգ, պատերազմի ընթացքում հայկական տեղեկատվության գործունեության արժեւորումը և արձանագրված բացթողումները դարձան համապատասխան քննարկման առարկա:

Խորհրդածողովի օրակարգին մաս էին կազմում ՀՀԴ մամուլի դիվանի կազմած ռազմավարության և մարտավարության նախագծի քննարկումը, ազգային-պետական արժեքների և գաղափարների քարոզչությունը և առկա խնդիրներն ու մարտահրավերները, Դաշնակցության քարոզչության ընդհանուր ուղղությունները, ՀՀԴ մամուլի բովանդակության և տեխնիկական հիմնախնդիրները ինչպես նաև ՀՀԴ մամուլի աշխատանքներու համադրումը:

Խորհրդածողովը հաստատեց.

1- Դաշնակցության մամուլը շարունակելու է ազգային ազատագրական պայքարի և սոցիալիստական գաղափարախոսության հունավորման և ժողովրդականացման իր կենսական առաքելությունը:

2- Արցախի ներկա կացությունը, դիմագրված մարտահրավերները Դաշնակցության մամուլը շարունակում է պահել իր ուշադրության կենտրոնում՝ հետամուտ լինելով ներազգային ու միջազգային հարթակներում համապատասխան արձագանքի:

3- Դաշնակցության մամուլը պետք է մնա ջատագովը ազգային արժեքների և ազգային միասնականության: Հայաստանին ու հայությանը սպառնացող բոլոր վտանգները մնում են համահայկական օրակարգում, առ այդ պետք է մղել Հայաստանի իշխանություններին վեր բարձրանալու ազգը պանակտող վարքագծից: Հայության միասնականության հարցը մասնակարգելի անհրաժեշտություն է:

4- Դաշնակցության մամուլը լայն զանգվածներին առավել հասանելի դարձնելու համար հարկ է հավելյալ զարկ տալ արդի արհեստագիտական հաղորդակցական միջոցներին և սոցիալական ցանցերին:

5- Դաշնակցության մամուլում քաջալերել դաշնակցության քաղաքական մտքի զարգացումը և կառուցողական բանավեճը՝ նախանձախնդիր մոտեցում ցուցաբերելով դաշնակցական կեցվածքի օրինակելի դրսևորման հարցում, շարունակելով հետո մնալ մի շարք լրատվամիջոցներում և, ընդհանրապես, սոցիալական ցանցերում տեղ գտած անպատշաճ արտայայտություններից և հակազդեցություններից:

6- Նկատի ունենալով պատերազմի ընթացքում հայկական լրատվադաշտի դրսևորած անհամարժեք ու անկազմակերպ վիճակը՝ ժողովը անհրաժեշտ համարեց մշակել ճշմարտության իրավիճակին համարժեք քարոզչական մեխանիզմ: Ժողովը հաստատեց, որ տեղեկատվական պատերազմը ավարտված չէ և հայությունը պետք է ծավալի կազմակերպված աշխատանք և միջազգային տեղեկատվական դաշտում ունենա գործունե ներկայություն:

7- Մամուլի բնագավառում մարդուժի պատրաստությունը և երիտասարդ սերնդի ներգրավումը հարկ է պահել ուշադրության առանցքում: Այս շրջանակում շեշտը դրվեց նաև արդի արհեստագիտական հնարավորությունների օգտագործման համար քարոզչական համակարգը հավելյալ մասնագետների անձնակազմով օժտելու անհրաժեշտության վրա:

8- Խորհրդածողովը հաստատեց.

ա. Ելնելով հայության ու Հայաստանի առջև ծառայած հիմնական մարտահրավերներից, Դաշնակցության մամուլը՝ վճռականորեն պիտի հետապնդի Արցախի հիմնահարցի հայնապատ լուծման, ինչպես նաև Հայաստանի պետականության, ինքնիշխանության և անվտանգության սպառնացող վտանգների հաղթահարման քարոզչական իր առաքելությունը:

բ. Սփյուռքի առջև ծառայած մարտահրավերները, մասնավորապես Մերձավոր Արևելքի դիմագրված ներկա տագնապը մնում են Դաշնակցության մամուլի մշտական ուշադրության ներքո:

ՀՀԴ մամուլի խորհրդածողով  
Երևան, 18.10.2021



## «Հայաստան» խմբակցությունը 10 740 000 դրամ պարգևավճարը փոխանցել է Քերոլայն Զոքսի անվան վերականգնողական կենտրոնին

ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավորների պարգևավճարն ամբողջությամբ փոխանցվել է Արցախի Քերոլայն Զոքսի անվան վերականգնողական կենտրոնին:

«Հայաստան» խմբակցության տարածած հայտարարության մեջ նշվում է, որ պետական, քաղաքական պաշտոններ զբաղեցնողներին պարգևատրում տրամադրելու՝ ակնհայտ անհամաչափ և սոցիալ-տնտեսական այս բարդ պայմաններում խայտառակ պրակտիկան անընդունելի է:

Խմբակցությունն այս հարցով նախապատրաստելու է Սահմանադրական դատարանին հասցեագրված դիմում: «Այս ընթացքում քննարկվել էր նաև պատգամավորների 250 000 դրամ փոխհատուցման վճարի տրամադրման մասին վերջերս ընդունված օրենքի խնդիրը:

Արդյունքում՝ արդեն մշակվել է պարգևատրումների և պատգամավորներին հատկացվող 250 000 ՀՀ դրամ փոխհատուցման վճարի վերաբերյալ ՍԴ դիմումը, և պատգամավորների 1/5-րդի ստորագրությունների պատրաստ լինելուն պես՝ կմուտքագրվի Սահմանադրական դատարան:

Հայտնում ենք նաև, որ ՀՀ Անկախության 30-ամյակի կապակցությամբ տրամադրված պարգևավճարների գումարն ամբողջությամբ՝ 10 740 000 դրամ, «Հայաստան» խմբակցությունը փոխանցել է Արցախում գինվորների համար գործող՝ Քերոլայն Զոքսի անվան վերականգնողական կենտրոն», - ասվում է խմբակցության հայտարարության մեջ:

Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ և նախկին փոխխոսնակ, իրավապաշտպան, բարոնուհի Քերոլայն Զոքսը նամակ է ուղարկել ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանին, որում շնորհակալություն է հայտնել դաշինքին՝ իր ղեկավարած բարեգործական հիմնադրամին նվիրատվություն անելու համար:

«Ինձ համար դժվար է գտնել երախտագիտու-

թյան և գնահատանքի համապատասխան խոսքեր: Ես և իմ գործընկերները խորապես շնորհակալ ենք այս առատաձեռն նվիրատվության համար, որն, անշուշտ, հույս ու լավատեսություն կբերի հիվանդներին և վերականգնողական կենտրոնի աշխատակիցներին:

Humanitarian Aid Relief Trust-ի (HART) գործընկեր Վարդան Թադեոսյանը պատերազմից անմիջապես հետո քաջաբար վերադարձել է Ստեփանակերտի կենտրոն իր գործընկերներից շատերի հետ: Նրանք այժմ ծայրահեղ ճնշման տակ են աշխատում՝ իրենց մշտական հիվանդներին և 44-օրյա պատերազմում վիրավորված մեծ թվով գինվորներին բուժում ապահովելու համար: Հետեւաբար, այս փայլուն նվերը և այն ամենը, ինչ այն ներկայացնում է, հսկայական հարմարավետություն կբերի անձնակազմին և հիվանդներին», - շնորհակալական նամակում գրել է բարոնուհի Զոքսը:

Ստեփանակերտի Քերոլայն Զոքսի անվան վերականգնողական կենտրոնը հիմնադրվել է 1998 թվականին Բարոնուհի Քերոլայն Զոքսի աջակցությամբ: Նպատակն էր աջակցություն ցուցաբերել Արցախյան պատերազմում վիրավորում ստացած գինվորներին և քաղաքացիական անձանց:

Տարիների ընթացքում այն ընդլայնվելով՝ սկսել է մատուցել իր վերականգնողական ծառայությունը Արցախում ֆիզիկական և մտավոր հաշմանդամություն ունեցող բոլոր այն անձանց, ովքեր դրա կարիքն ունեն:

Կենտրոնը, լինելով միակը իր ծառայության մեջ, չունի տարիքային սահմանափակում: Կենտրոնում գործում է մանկական առողջության բաժանմունք, ինչպես նաև աուտիզմ ախտորոշում ունեցող երեխաների համար ցերեկային խնամքի և բուժման կենտրոն: Կենտրոնն ունի տնային այցելության բաժանմունք, որի շահառուներն են 200-ից ավելի ծանր ախտորոշումով հաշմանդամություն ունեցող անձիք:

### Տեղահանված ու բռնագրավված Հաղրուք. մեկ տարի անց

ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության նախաձեռնությամբ հոկտեմբերի 13-ին անցկացվեց «Տեղահանված ու բռնագրավված Հաղրուք. մեկ տարի անց» հիմնահարցեր եւ մարտահրավերներ» խորագրով հանրային քննարկում: Քննարկմանը մասնակցել են վերջին մեկ տարվա ընթացքում ստեղծված՝ տեղահանված հաղրուքիների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՀՀ-ում Արցախի կառավարության օպերատիվ շտաբի պետը, Հայաստանում Արցախի մշտական ներկայացուցիչը, ՀՀ ՄԻՊ-ի, ԱԾ ՄԻ պաշտպանության եւ հանրային հարցերի հանձնաժողովի ներկայացուցիչները:

Մինչ քննարկման անցնելը՝ Գեղամ Մանուկյանը խնդրեց մեկ րոպե լուսավորությամբ հարգել 44-օրյա պատերազմի ժամանակ նահատակված հերոսների հիշատակը:

Պատգամավորը հայտարարեց, որ քննարկումը նախաձեռնել են, քանի որ մինչ օրս հստակ չէ Հաղրուքի անկման հանգամանքները, իսկ բռնագաղթածների սոցիալական խնդիրները լիարժեք չեն լուծվում:

«Այս միջոցառումն անցկացնում ենք չափազանց բարդ իրավիճակում, երբ ՀՀ-ի եւ ԱՀ-ի շուրջ անվտանգության միջավայրն ավելի փխրուն է դարձել», - բացման խոսքում ասաց «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը եւ հավելեց, որ արտաքին եւ ներքին սպառնալիքներն արդեն Հայաստանի սահմանից ներս են եւ բախում են մեր դռները, հետեւաբար՝ պետք է համապատասխան որոշումներ ընդունել առկա խնդիրները լուծելու համար:

Նա հայտարարեց, որ արդեն մեկ տարի է անցել Արցախի սանձազերծած ագրեսիայից, բայց պետության կողմից որեւէ գնահատական չի հնչել, քանի որ պետական մարմինների կողմից արվել

են բազմաթիվ սխալներ ու բացթողումներ, եւ իշխանություններին դժվար է սեփական գործողություններին գնահատական տալ:

Պաշտպանության նախկին նախարարը հայտնեց, որ իշխանություններն ավելի շատ ներքին անվտանգությանն են ուշադրություն դարձնում, քան սահմանի տիրող անվտանգային խնդիրներին:



ՀՀ մարդու իրավունքների առաջին պաշտպան Լարիսա Ալավերդյանն ասաց, որ հստակ պետք է արձանագրվի Արցախի կողմից Արցախի օկուպացված տարածքներից բռնի տեղահանված արցախցիների թիվը:

«Այսօր հայտնի է, թե քանի հաղրուքի է բռնի տեղահանվել Հաղրուքից, եւ արդյո՞ք կրած վնասների հաշվառումը կա՞ մասնավորի եւ հանրայինի: Մենք նման աշխատանքներ իրականացրել ենք նախկինում «Կոլցո» օպերացիայից հետո եւ այլն: Այդ ամենը շատ կարեւոր է, քանի որ այն փաստաբանական խմբի համար հիմք է ծառայում: Բռնի տեղահանվածների արտագաղթը ինչպե՞ս է ֆինանսվում, դուք գիտե՞ք, թե նրանք ուր են գնում», - դիմելով քննարկմանը ներ-

կա ՀՀ-ում Արցախի կառավարության օպերատիվ շտաբի պետ Միքայել Վիրաբյանին՝ հետաքրքրվեց Լարիսա Ալավերդյանը:

Ի պատասխան՝ Միքայել Վիրաբյանն ասաց, որ Արցախի պետական նախարարի մոտ վաղուց կատարվում էին այդ աշխատանքները:

ՀՀ-ի Արցախի կենտրոնական կոմիտեի անդամ Արա Պուլուզյանի խոսքով՝



այն, ինչ այսօր տեղի է ունենում, մեկ բանի մասին է վկայում՝ չկա հստակ մշակված ռազմավարություն:

«Ռազմավարություն չունենալը ենթադրում է հարցը թաղելու ռազմավարություն: Եթե այդ տարածքը, որ տվել էս, քեզ համար հայրենիք չէ, այլևս այդ հարցով չես մտածում, ոչ էլ իրավական կամ այլ հարցեր ես մեջտեղ բերում: Հարցը մաշեցնում են, սոցիալական հարցեր կլուծեն եւ ամեն ինչ կավարտեն: Վերջում կասեն՝ ես Ձեզ բնակարանով ապահովել եմ կամ երեք տարի հետո բնակարան եմ տալու, էլ ի՞նչ եք ուզում: Այստեղ գաղափարական հարց կա, արդյո՞ք կորսված տարածքները հայրենիք ենք պատկերացնում, հիմա Արցախն ի՞նչ կարգավիճակ ունի Հա-

յաստանի համար, սրանից հետո սկսվում են մնացած հարցերը», - շեշտեց նա:

Նա վերհիշեց 1990-ական թթ. Զարվաճառում շահումյանցիների վերաբնակեցնելու մասին քննարկումները եւ հիշեցրեց, որ Պաղեստինում 40 տարի մարդիկ ապրում են ճամբարներում, նրանց բնակարան չեն հատկացնում: «Պետք է սերունդ դաստիարակես, որը հետ է վերադառնալու իր հայրենիքը: Մեր գործող իշխանությունները նման գաղափարախոսություն չունեն, ազգային գաղափարախոսություն, հայրենիքի հասկացողություն չունեն: Եվ այդ բոլորից ելնելով՝ հարցը հավասարեցվում է կենցաղային հարցերը լուծելուն, իսկ կարեւոր խնդիրները հայտնվում են լուսանցքում: Կենցաղային հարցեր լուծելով՝ փորձում են քողարկել, մաշեցնել, ոչնչացնել՝ ազգային-ազատագրական պայքարի, հայրենիքի գաղափարը», - իր խոսքում նշեց Արա Պուլուզյանը:

Քննարկման ընթացքում վեր են հանվել հաղրուքիներին եւ առհասարակ արցախցիներին առնչվող բազմաթիվ հարցեր: Արձանագրվել է, որ առկա են սոցիալական, բնակարանային, աշխատանքային, առողջապահական խնդիրներ, բաց է մնացել նրանց կարգավիճակի հարցը, կառավարության կողմից բացակայում է առկա խնդիրների լուծմանն ուղղված ռազմավարությունը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել նմանորինակ քննարկումները դարձնել ավելի ակտիվ եւ շարունակական: «Հայաստան» խմբակցությունը վստահեցրել է, որ հաղրուքիների եւ Արցախի մյուս բնակավայրերից տեղահանված բնակիչների խնդիրներն այսուհետ էլ շարունակելու է պահել իր մշտական ուշադրության կենտրոնում եւ խորհրդարանական բոլոր լծակներն օգտագործելու է դրանց լուծմանն ուղղությամբ:

**Տարբերակ ԱՐԱՋԱՆՅԱՆ**

### Արցախում են ՀՕՍ-ի ԱՄՆ Արեւմտյան շրջանի ճրջանային վարչության անդամները

#### Ընտրվել է ՀՕՍ-ի Արցախի միավորի նոր վարչություն

Հոկտեմբերի 2-ին Ստեփանակերտում կայացել է Հայ օգնության միության Արցախի միավորի մասնաճյուղի տարեկան ընդհանուր՝ 17-րդ անդամակցական ժողովը:

Համավարակի եւ պատերազմի պատճառով նախորդ երկու տարիներին ժողովը չի կայացել: Այդ իսկ պատճառով Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի շենքում իրավիճակ ժողովը քննել ու գնահատական է տվել ՀՕՍ-ի Արցախի միավորի վարչության 26-ամսյա գործունեությանը:

Ժողովին մասնակցում էին նաեւ ՀՕՍ-ի Կենտրոնական վարչության անդամ Համեստ Սասունյանը, ՀՀ-ի Արցախի կենտրոնական կոմիտեի անդամ Ալյոնա Գրիգորյանը: Ժողովակազմներն արժեւորել են պատերազմի օրերին ՀՕՍ-ի աշխարհասփյուռ կառույցի, այդ թվում՝ Արցախի միավորի ծավալած գործունեությունը, արցախցուն հոգեբանական, նյութական ու բարոյական աջակցություն ցուցաբերելուն ուղղված ծրագրերը:

Նաեւ առաջարկներ են ներկայացվել առաջիկա միամյա գործունեության վերաբերյալ՝ շեշտը դնելով Արցախում իրականացվող կրթական, մասնագիտական պատրաստվածությանը, երեխաների զարգացմանն ուղղված ծրագրերին: Ժողովի վերջում ընտրվել է նոր վարչություն: ՀՕՍ-ի Արցախի միավորի ատենապետուհի է ընտրվել Լիլիթ Մարտիրոսյանը:

#### ՀՀ «Նիկոլ Դուման» կենտրոնում հյուրընկալվել է ՀՕՍ-ի Արեւմտյան շրջանի ճրջանային վարչության պատվիրակությունը

Հոկտեմբերի 8-ին ՀՀ-ի Արցախի «Նիկոլ Դուման» կենտրոնում ՀՀ-ի Արցախի ԿԿ-ն ընդունել է Հայ օգնության միության ԱՄՆ Արեւմտյան շրջանի ճրջանային վարչության ներկայացուցիչներին:

ՀՀ-ի Արցախի ԿԿ ներկայացուցիչ Արթուր Մոսիսյանը,

ողջունելով ՀՕՍ-ուհիների այցը, կարեւորել է Արցախի համար դժվար ժամանակներում ՀՕՍ-ի աշխարհասփյուռ կառույցների նյութական ու բարոյական աջակցությունը, Արցախում տարիներ շարունակ իրականացվող բարեգործական ծրագրերը:

«Ապառաժ»-ի հետ զրուցում ՀՕՍ-ի ԱՄՆ Արեւմտյան շրջանի ճրջանային վարչության ատենապետուհի Սիլվա Փոլատյանը նշել է, որ առաջին անգամ է այցելում



Արցախ: Ճրջանային վարչության այցի նպատակն է՝ ծանոթանալ Արցախում տիրող իրավիճակին եւ հնարավորության սահմաններում օգնել կարիքի մեջ գտնվողներին: Արցախ այցելության ընթացքում նախատեսվում են այցելություններ ՀՕՍ-ի Սոսե մանկապարտեզներ, Արցախի մի շարք համայնքներ:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ-ի ԿԿ անդամ Ալյոնա Գրիգորյանն ու ՀՕՍ-ի Արցախի միավորի ատենապետուհի Լիլիթ Մարտիրոսյանը:

#### Առավելագույնը պիտի անենք մեր ժողովրդի կողքին կանգնելու համար

Արցախում գտնվող՝ Հայ օգնության միության ԱՄՆ Արեւմտյան շրջանի ճրջանային վարչության անդամները

են գրասենյակի տնօրեն Ժամես Բունիաթյանը հոկտեմբերի 8-9-ը այցելել են Ստեփանակերտում, Աշտարկայի մարզում գործող ՀՕՍ-ի «Սոսե» մանկապարտեզներ, Քերուլյան Ջոքի անվան վերականգնողական կենտրոն, ներկա գտնվել Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանում կազմակերպված համերգին:

«Ցանկացանք ամբողջական կազմով այցելել եւ ականատես լինել մեր բոլոր ծրագրերին, անձամբ օժանդակել, մեր օգնությունը բերել մանկավարժներին եւ աշակերտներին», - «Ապառաժ»-ի հետ զրուցում ասել է ՀՕՍ-ի ԱՄՆ Արեւմտյան շրջանի ճրջանային վարչության ատենապետուհի Սիլվա Փոլատյանը:

Նախքան Արցախ այցելելը՝ Հայաստանի շրջանային վարչության հետ են հանդիպել, իսկ երեւան վերադառնալուց հետո նախատեսում են այցելել ծերանոցներ, Վիրավոր գինվորների վերականգնողական կենտրոն:

Սիլվա Փոլատյանի խոսքով՝ վարչության բոլոր անդամներն էլ հուզված են, բայց առավելագույնը պիտի անեն «մեր ժողովրդի, մեր զավակների կողքին կանգնելու համար»:

«Մոտիկից տեսանք երեխաներին, ծանոթացանք տարբեր ընտանիքների սոցիալական պայմաններին եւ փորձեցինք մեր հնարավորության սահմաններում օգտակար լինել, ուժ տալ նրանց, որ շարունակեն պայքարը», - նշել է նա:

«Ականատես լինելով, թե ժողովուրդն այստեղ ինչ կյանքով է ապրում, ինչ մարտահրավերներ է հաղթահարում, մեր արածը ոչինչ ենք համարում՝ այստեղի ժողովրդի արածի հետ համեմատ: Համոզված եմ, որ ամբողջ կազմը փոխված է հետ վերադառնալու: Այստեղի ժողովրդի ոգով ներշնչված եւ փոխված ենք հետ վերադառնալու եւ ոգեւորելու Սփյուռքի ընկերակիցներին, որ ավելի զորավոր կանգնեն Հայաստան-Արցախի կողքին: Մենք մղիչ ուժը պետք է լինենք, որ Սփյուռքը ավելի մեծ ուժով միանա մեր բոլոր ծրագրերին», - նշել է վարչության ատենապետուհին:

**S. ԱՐԱՋԱՆՅԱՆ**

# Տեսական ժամանակ մենք քայլել ենք ածելիի սայրի վրա, բայց այդ տարիներին մեզ հաջողվել է Արցախի դեմ պատերազմ սկսելու գաղափարի հետ Ադրբեջանին մենակ թողնել

ԱՅ Ազգային ժողովի նախկին նախագահ, Արցախի ժողովրդավարական կուսակցության նախագահ Աշոտ Ղուլյանի հետ «Ապառաժ»-ի հարցազրույցն անցած տարվա պատերազմի, հնարավոր բացթողումների, Արցախի ներքաղաքական իրավիճակի ու ապագայի տեսլականի մասին է:

**- Պարոն Ղուլյան, անցած տարի այս օրերին Արցախում պատերազմ էր: Ձեր կարծիքով, կարելի՞ էր խուսափել պատերազմական գործողությունների բռնկումից եւ ինչպե՞ս:**

- Անցած տարվա այս օրերը մեր նորագույն պատմության մեջ ընդմիջում հիշվելու են որպես ամենադժնգակ ժամանակներ, երբ մեզ պարտադրված երրորդ պատերազմի արդյունքում ամեն ինչ քանդվեց ու կորսվեց. 30 տարիների մեր աշխատանքը՝ քաղաքական, անվտանգային, տնտեսական, միջազգային հարաբերությունների, սոցիալական եւ այլ ուղղություններով ռեսուրսների կուտակման նպատակով, 44 օրվա ընթացքում գրոյացվեց: Պետական հաստատությունների գործունեության եւ անվտանգային միջավայրի ընկալման տեսանկյունից մենք հիմա գտնվում ենք դարաբաղյան ազատագրական շարժման սկզբնական փուլի՝ 1988-1991թթ. իրավիճակում, երբ ամենուր անորոշություն էր: Բայց սկզբունքային տարբերություն կա մեր ներկա կացության եւ այդ ժամանակահատվածի միջև. 88 թվականից մեր ժողովուրդը համախմբված էր ավելի, քան երբևէ, ու նպատակադրված՝ բոլոր դժվարությունները հարթահարելու եւ Արցախի ազատությանը հասնելու:

Կարելի՞ էր արդյոք խուսափել պատերազմից, իհարկե՞ այո՞, որովհետեւ նախորդ գոնե տասը տարիներին դա հաջողվել է: Ամեն ինչ համեմատության մեջ է տեսանելի. մենք միշտ էլ պատերազմի վերսկսման վտանգ ունեցել ենք, բայց թշնամին ավելի զգուշավոր է եղել, նրանից ավելի լավ մեր ուժեր ու թույլ կողմերը հաշվարկող դժվար թե գտնվի: Ամենաթարմ օրինակը 2016թ. Ապրիլյան պատերազմն էր եւ մեր կամքի ցուցադրությունն այդ օրերին: Մի առիթով ասել եմ, ապրիլի 2-ի երեկոյան Ստեփանակերտի իրապարակում 2 հազար զինված ու պատրաստ երկրպագիներ էին կանգնած՝ Մանվել Գրիգորյանի գլխավորությամբ, իսկ 2020թ. հոկտեմբերի սկզբներին տներից սաղավարտ ու բաճկոն հավաքելու վիճակում էինք, ֆիդայական խմբեր ձեռավորելու կոչեր էին հնչում: Տեսական ժամանակ մենք քայլել ենք ածելիի սայրի վրա, բայց այդ տարիներին մեզ հաջողվել է Արցախի դեմ պատերազմ սկսելու գաղափարի հետ Ադրբեջանին մենակ թողնել, խափանել այդ հարցում միջազգային աջակցություն ստանալու նրա ջանքերը:

**- Ինչպե՞ս էք գնահատում Արցախի ռազմական եւ քաղաքական դեկավորության գործունեությունը պատերազմի օրերին, արդյո՞ք պետական ապարտոզ կարողացավ համարժեք արձագանքել տիրող իրավիճակին:**

- Իմ գնահատականը չի կարող տարբերվել հանրային կարծիքում այսօր տիրապետող տեսակետից. մեր պետական կառավարման համակարգը պատրաստ չէր այս կարգի պատերազմի: Հավանաբար պետական եւ ոչ պետական բազմաթիվ օղակներ հերոսական աշխատանք են տարել նվազագույն կենսապայմաններ ապահովելու համար, մասնավորապես՝ Էներգետիկները, կոմունալ եւ այլ ծառայությունների աշխատակիցները: Գուցե ամենասկզբում պետք էր ասել ինչքան մեր բանակի առանձին ստորաբաժանումների կամ առանձին նվիրյալների մասին, որոնց հերոսությունների մասին մենք ամենայն հավանականությամբ չենք էլ իմանա: Բայց 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմում մենք միայն ճիշտ, իսկ գուցե ավելի տեղին կլիներ ասել՝ ճգրիտ ռազմավարական պլանավորում իրականացնելու դեպքում կարող էինք հաջողությամբ դիմակայել մեր դեմ ելած ոսոխին:

Ղուրս եկեք փողոց եւ հարցրեք ռազմական արվեստի ու ռազմավարության մասին, եւ կհամոզվեք, որ երբեք հոգուց մեկը ձեզ անպայման կբացատրի դրանց կարեւորությունը, ավելին՝ օրինակներ կբերեն Սուլ-Ցզիից, Կլաուզեմիցից, բայց տեսական գիտելիքները բավարար չեն մեր ժամանակներում: Եվ Արցախում եւ ՅՅ-ում վերջին պատերազմի ընթացքում չաշխատեց ռազմավարական միտքը, իսկ դա նշանակում է պետական կառավարման համակարգում հստակ գործառույթների, աշխատանքների բացակայություն եւ ոչ ճիշտ դերաբաժանում: Խոսքն ամենեւին էլ պաշտպանական համակարգի ռազմավարության մասին չէ: Այդ բնագավառներում, համոզված եմ, կգտնվեն շատ ավելի տեղեկացված մասնագետներ, որոնք կբացատրեն այդ ուղղությամբ մեր թերազմաների պատճառները: Իմ պնդումը վերաբերում է աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային անվտանգության համակարգում վերջին մի քանի տարիներին տեղի ունեցած արմատական փոփոխություններին եւ այդ ամենին համարժեք արձագանքելու նպատակով չձեռնարկված քայլերին:



Որպեսզի հասկանալի լինի, նորից համեմատություն բերեմ. եթե Ադրբեջանն իր սեփական ուժերը գնահատելով օգնության է կանչում Թուրքիային եւ դիմում ոչ պոպուլյար՝ ահաբեկիչներին ներգրավելու մեթոդների, ապա ի՞նչ ենք ձեռնարկում մենք այդ ընդլայնված ու ծայրահեղական ճակատին դիմակայելու համար:

**- Ձեր էջի հրապարակումներից մեկում նշել էիք, որ պարտությունից կարելի էր խուսափել, եթե հայությունը մասնատված չլիներ: Արդյո՞ք դա էր պարտության հիմնական պատճառը:**

- Պարտության պատճառները միատիպ չեն: Հանրահայտ ճշմարտություն է, որ պատերազմները վարում են պետությունները, իսկ բանակը, ռազմական ուժը՝ հակազդող ուժի միայն երեսացող կողմն է: Բոլոր նախորդ տարիներին Արցախի կերպարն ամենուր, նույնիսկ մեր հակառակորդների կողմից, ներկայացվում էր որպես աշխարհասփյուռ հայության կողմից համակողմանի պաշտպանության ու հոգածության տակ գտնվող տարածք եւ հանրություն: Այլ կերպ հնարավոր էլ չէր պատկերացնել. բնակչության քանակով, պաշարներով եւ մյուս բոլոր պարամետրերով Արցախն ու Ադրբեջանը համեմատելի միավորներ չեն, բայց նույն Ադրբեջանը լավ էլ հասկանում էր, որ Արցախն այն առանցքն էր, որի շուրջ համախմբված են համայն աշխարհի հայերը, էլ չէմ ասում ճանաչված Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պաշտպանության հանգամանքի մասին:

2018 թվականից միտումնավոր, թե միատեսակությամբ ամեն ինչ արվել է, որ այդ նույն հայության ներսում բաժանարար գծերն ավելի ամրապնդվեն եւ նոր գծեր քաշվեն: 2020թ. սեպտեմբերի 27-ի նախօրյակին մենք հայության բոլոր հատվածներում ունեցել ենք մի քանի իրարամերժ, իրար հանդեպ թշնամացած հանրային շերտեր: Նման վիճակում պատերազմներ չեն հաղթում: Այդ մասին էի գրել:

**- 2002-2004 թթ. դուք ԼՂՀ արտաքին գործերի նախարարն էիք: Ձեր կարծիքով, փոխվել էն արդյոք ներկայիս ԱՀ արտաքին քաղաքականության ուղղությունները: Որո՞նք էք համարում, այդ առումով, մեր հիմնական խնդիրը:**

- Որեւէ հիմք չկա պնդելու, որ մեր արտաքին քաղաքականության ուղղությունները փոխվել են կամ նախկինում ավելի ուժեղ էր այն իրականացվում: Խնդիրն այլ տիրույթում պետք է փնտրել. այսօր մենք ավելի քիչ ազդեցություն ունենք նույն կարգավորման գործընթացի վրա, քան անցյալ տարիներին: Միանգամայն հասկանալի է, որ այս կացությունը ստեղծվել է պատերազմից հետո, բայց այդ ամենի հիմքերն արդեն ակնհայտ երեւում էին անցյալ տարվա պատերազմից շատ առաջ:

Մեր կարգի երկրներին երբեք չեն ներվում կարգավորման երկարատեւ գործընթացի միջանկյալ արդյունքների մեկ օրում կամ մեկ հայտարարությամբ չեղարկումը. որոշակի դիմամիկա, հակագրվանային արդյունքներ են հավաքվում տարիներ շարունակ ու, երբ որեւէ կողմ ինչ-որ պահի հայտարարում է սեփական կետից բանակցային գործընթաց սկսելու մասին, այդ երեւոյթներն արդեն շրջայական վերանայումների են հանգեցնում նաեւ միջորդների գործողություններում եւ պատկերացումներում: Վերցրեք աշխարհի այլ թե՛ կետերում մյուս հակամարտությունները. բոլոր մեզ հայտնի դեպքերում կողմերն ուղղակի «դրո՛ւմ են» բանակցային գործընթացի պատմության ու նրբություններին տիրապետող անձերի եւ ինստիտուցիաների համար եւ ամեն ինչ անում են՝ ապահովելու

կետից բանակցային գործընթաց սկսելու մասին, այդ երեւոյթներն արդեն շրջայական վերանայումների են հանգեցնում նաեւ միջորդների գործողություններում եւ պատկերացումներում: Վերցրեք աշխարհի այլ թե՛ կետերում մյուս հակամարտությունները. բոլոր մեզ հայտնի դեպքերում կողմերն ուղղակի «դրո՛ւմ են» բանակցային գործընթացի պատմության ու նրբություններին տիրապետող անձերի եւ ինստիտուցիաների համար եւ ամեն ինչ անում են՝ ապահովելու

կետից բանակցային գործընթաց սկսելու մասին, այդ երեւոյթներն արդեն շրջայական վերանայումների են հանգեցնում նաեւ միջորդների գործողություններում եւ պատկերացումներում: Վերցրեք աշխարհի այլ թե՛ կետերում մյուս հակամարտությունները. բոլոր մեզ հայտնի դեպքերում կողմերն ուղղակի «դրո՛ւմ են» բանակցային գործընթացի պատմության ու նրբություններին տիրապետող անձերի եւ ինստիտուցիաների համար եւ ամեն ինչ անում են՝ ապահովելու

կետից բանակցային գործընթաց սկսելու մասին, այդ երեւոյթներն արդեն շրջայական վերանայումների են հանգեցնում նաեւ միջորդների գործողություններում եւ պատկերացումներում: Վերցրեք աշխարհի այլ թե՛ կետերում մյուս հակամարտությունները. բոլոր մեզ հայտնի դեպքերում կողմերն ուղղակի «դրո՛ւմ են» բանակցային գործընթացի պատմության ու նրբություններին տիրապետող անձերի եւ ինստիտուցիաների համար եւ ամեն ինչ անում են՝ ապահովելու

**- Երկար ժամանակ ԱՀ խորհրդարանի նախագահն էիք: Վերջերս ԱՀ ԱԾ նախկին Արթուր Թովմասյանը հայտարարել էր, որ պատերազմից հետո միջխորհրդարանական հանձնաժողովը չի գործել: Ինչպե՞ս կգնահատեիք 2015-2020թթ. համագործակցությունը ՀՀ խորհրդարանի հետ, այն ժամանակ էլ խնդիրներ կային միջխորհրդարանական համագործակցության առումով:**

- Ինձ համար անհասկանալի է մնում այն հապաղումը, որ նկատվում է այս հարցում, ի՞նչ է նշանակում միջխորհրդարանական հանձնաժողովը չի գործել: Որպեսզի պարզ լինի, թե ինչ ծավալի ու բովանդակության գործ կարելի է իրականացնել այդ ռեսուրսներն աշխատեցնելով, նորից համեմատենք՝ ի՞նչ ենք ունեցել եւ ի՞նչ արդյունքներ ենք գրանցել: Նախքան այդ հարցին անդրադառնալու՝ կուզե՞նք մեզ հարցնել, որպեսզի հարցնենք ձեր կարծիքը մեր հարցի վրա:

նախ՝ կուզե՞նք մեզ կարելու տեղեկատվություն հիշեցնել. մինչեւ 2006թ. ՀՀ ԱԾ-ի եւ Արցախի Հանրապետության ԱԾ-ի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովը գործել է երկու հայկական խորհրդարանների փոխնախագահների մակարդակով, բայց 2006թ. այն ժամանակ ՀՀ ԱԾ նախագահ Տիգրան Թորոսյանի առաջարկով հանձնաժողովի ղեկավարման ձեռնարկվել է փոխարինվել է՝ բարձրացվելով ԱԾ նախագահների մակարդակի: Այս քայլը կարող է տեխնիկական ընկալվել, բայց հիմքում դրվել է հայկական երկու հանրապետությունների միջեւ կապերը ճանաչված երկրների միջեւ հարաբերությունների մակարդակին հասցնելը:

Բոլոր նախորդ տարիներին այդ հարաբերությունները միջխորհրդարանական հարաբերության վրա կառուցվել են իրականացվել են պաշտառ մակարդակով, նախապես պայմանավորված ժամկետներում, օրակարգով եւ ոչ միայն այդ մակարդակի վրա: Հանձնաժողովի կառուցման ընթացքում հանդիպումներ ու քննարկումներ են տեղի ունեցել ԱԾ նախագահների, փոխնախագահների միջեւ, մշտական հանձնաժողովների միջեւ համատեղ կատարելիքի ձեռնարկում եւ այսպես շարունակ:

Հայաստանի նոր խորհրդարանում Արցախի հարցերով հանձնաժողովի ստեղծումը շատ համարժեք քայլ կդիտվեր 2020թ. պատերազմից հետո Արցախի շահերի պաշտպանության համար օրինական հիմքեր ձեռավորելու տեսանկյունից, բայց, ցավոք, դրա կարեւորությունը չընկալվեց, իսկ գլխավոր հիմնավորումն այն էր, որ արդեն ունենք միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողով: Հիմա էլ պարզվում է, որ այդ ֆորմատը դեռ չկա...

**- Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել առկա հուսահատ վիճակը եւ Արցախի հայկական մնալու վերաբերյալ հստակ համոզում ունենալ:**

Արցախը հայկական պահելու համոզմունքը ոչ ոք չի կարող մեզանից հանել, բայց այսօրվա հուսահատ վիճակը հաղթահարելու հարցի լուծումը շատ բարդ էմ տեսնում: Խնդիրն այն է, որ Արցախից մնացած տարածքի համար պատերազմը շարունակվում է, իսկ մեր կողմից քաղաքական որոշում ընդունողների մոտ միանգամայն անհամարժեք վերաբերմունք է խաղաղության նոր դարձաշրջան բացելու տեսիլքներով: Վերջին մի քանի օրերի զարգացումները, սահմանամերձ բնակավայրերի եւ մեր ռազմական հենակետերի շուրջ սաղորակների բորբոքումը խոսում է հակառակ կողմից բոլորովին այլ մտադրությունների մասին: Մենք պետք է՛ն ասֆալտ անենք, ե՛ն բնակարաններ կառուցենք ու վերանորոգենք, բայց այդ ամենից առաջ պետք է ամրացնենք սահմաններն ու գոտեպնդենք սահմանին կանգնած զինվորին:

Մեր տարածաշրջանով երկուս տարիներ զբաղված քաղաքական վերլուծաբաններից մեկը վերջերս մի դիպուկ ակնարկ է արել՝ նկատելով, որ այսօրվա գլխավոր հարցադրումն այն է, թե ի՞նչ տեղ է գրավում Արցախը Հայաստանի ներկայիս քաղաքական ու պետական դիսկուրսում: Այս հարցի պատասխան տվողը, միջազգային հարաբերությունների ընդունված կանոնների համաձայն եւ, առաջին հերթին, գործող իշխանություններն են, պատմական պատասխանատվությունը նրանց վրա է:

Եվ մենք մի ճանապարհ ունենք լավատեսություն ձեռք բերելու համար. եթե մի կողմ են դրվում երկրի ներսում հատվածական շահերը, հանրությանը տարբեր մասերի բաժանելու գործելու ընդունում ենք սեփական սխալները եւ ստանձնում Արցախը հայկական պահելու առաքելությունը: Եթե այս գիտակցումը չկա, ուրեմն պետք է քաղաքակիրթ ձեռքով ճանապարհ բացել նոր, այդ առաքելությունը կրելու ունակ եւ կարող իշխանությունների համար:

**Հարցազրույցը՝ Տարեկ Աղաջանյանի**

### «Ոսկե արծիվ» շքանշանակիր Սերգեյ Շաքարյան

Կան անհատներ, որոնց առկայությունը շրջադարձային նշանակություն ունի պատմական իրադարձությունների համար: Կան անհատներ, որոնց ներկայությունը որոշիչ դեր ունի պատմական իրադարձություններ կերտելու գործում: Կան անհատներ, որոնք հենց իրենք են պատմական իրադարձություններ կերտում իրենց գործունեությամբ: Այդպիսիք վեր են մարդկային աշխարհիկ կյանքում տեղի ունեցող անազնիվ և անարդար գործերից, կեղծիքից, ստիգ, ինքնազնադատման, ինքնամեծարման և ինքնագովեստի շռայլ խոսքերից: Այդպիսիք կյանքն արժեքալից ապրելու, իրենց կյանքով կյանք տալու, անմատչելի սիրո և անձնագոհության վառ կերպարներ են: Այդպիսիք հար մնում են սերունդների հիշողության մեջ և ճիշտ ապրելու օրինակ հանդիսանում: Այդ անձանցից է Արցախի հերոս, գնդապետ Սերգեյ Շաքարյանը:

Սերգեյ Սլավա Շաքարյանը ծնվել է 1974թ. դեկտեմբերի 9-ին ԱՀ Յարդուբի շրջանի Այգեստան գյուղում: Սովորել է տեղի Ա. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում, այնուհետև Յարդուբի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում: Գերագնացությամբ ավարտելով դպրոցը, ուսումը շարունակել է Ստեփանակերտի գյուղատնտեսական ինստիտուտում:

1988թ. սկսված Արցախյան շարժումը, որ 1991-ից վերածվում էր ռազմական բախման, 17-ամյա Սերգեյին պիտի ստիպեր կիսատ թողնել ուսումը և նույն թվականի փետրվարին վերադառնալ հայրենի գյուղ, հոր հետ կամավորագրվել հայրենիքի պաշտպանության գործին: Կարճ ժամանակում սովորեց տանկ վարել և անմիջապես մեկնեց ռազմադաշտ, դարձավ տանկի հրամանատար, 18 տարեկանից՝ սպա:

1992թ. փետրվարի 1-ից Սերգեյ Շաքարյանը նշանակվել է ԼՂՀ Ինքնապաշտպանական ուժերի Յարդուբի ջոկատի հրաձիգ, 1992թ. սեպտեմբերի 1-ից՝ ԼՂՀ ՊԲ 1-ին ՊՇ Տանկային վաշտի 2-րդ դասակի հրամանատար, 1993թ. սեպտեմբերի 1-ից՝ ԼՂՀ ՊԲ 1-ին ՊՇ Տանկային գումարտակի օպերատոր:

Համացանցում հրապարակված տեսանյութերից մեկում Շաքարյանը պատմում է, որ երբ առաջին օրը դիրք էին գնացել, իրենց բախտ էր վիճակվել մարտական արկով կրակել: Դրանից հետո, ըստ նրա, սիրահարվել է տեխնիկային ու, որպես տանկիստ, շարունակել պատերազմում իր բալլերը կատարել: Որոշ ժամանակ անց Շաքարյանին և նրա ստորաբաժանման տղաներին բարդ առաջադրանքներ էին տրվում, որոնք հաջողությամբ հաղթահարում էին:

Սերգեյի հայրը՝ Սլավա Շաքարյանը, 46 տարեկանում զոհվել է մարտական գործողությունների ընացքում՝ ականի պայթյունից:

Սերգեյի ավագ որդու՝ Սլավայի խոսքով՝ հայրը իր հոր մահվան պատճառով լցված էր վրեժով, այդ իսկ պատճառով էլ որոշել էլ էր կիսատ չթողնել նրա գործը: Պատերազմից հետո Սերգեյը մեկնում է ՌԴ, սովորում ռազմական ակադեմիայում և, կարմիր դիպլոմ ստանալով, վերադառնում է հայրենի Արցախ, զբաղվում սիրելի և հոգեհարազատ աշխատանքով:

1997թ. Սերգեյ Շաքարյանը նշանակվել է Յարդուբի Տանկային գումարտակի հրամանատարի տեղակալ սպանազնության գծով, 2000թ.՝ Յարդուբի 3-րդ հրաձգային գումարտակի հրամանատարի տեղակալ սպանազնության գծով, 2004թ.՝ ԱՀ ՊԲ 1-ին ՊՇ-ի 1-ին հրաձգային գումարտակի հրամանատար, 2008թ.՝ ԱՀ ՊԲ 9-րդ ՊՇ-ի 5-րդ հրաձգային գումարտակի հրամանատար, 2010թ.՝ Յարդուբի 1-ին ՊՇ-ի հրամանատարի տեղակալ մարտական պատրաստության գծով, նույն թվականին՝ 9-րդ ՊՇ-ի շտաբի պետ, ՊՇ-ի հրամանատարի տեղակալ, 2012-ին՝ Յարդուբի 1-ին ՊՇ-ի հրամանատարի տեղակալ մարտական պատրաստության գծով, 2013-ին՝ Ասկերանի 4-րդ ՊՇ-ի շտաբի պետ, ՊՇ հրամանատարի տեղակալ, 2014-ին՝ Յարդուբի 1-ին ՊՇ-ի հրամանատար, 2018-ին՝ 18-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ:

Չինվորների և սպաների սիրելի հրամանատարն ու ավագ ընկերն իր ծառայության 30 տարիների ընթացքում հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել է բազմաթիվ պատվոգրերի, շնորհակալագրերի և շուրջ 24 մեդալների: Վերջինը՝ «Արցախի հերոս»-ի կոչումն էր, որին արժանացել է 2020թ. սանձազերծված դաժան պատերազմի օրերին, հոկտեմբերի 4-ին:

Սերգեյ Շաքարյանն ամուսնացել է 1999 թվականին՝ Չարինե Գեորգյանի հետ: Ունեն 3 զավակ՝ 21-ամյա Սլավան, 19-ամյա Սեանկն ու 9-ամյա Մանեն:

Սերգեյ Շաքարյանը ազգին նվիրված մարդ էր: Ազգին էր, որովհետև ամբողջ կյանքը նվիրել էր իր հայրենիքի սահմաններն անառիկ պահելուն և կառնած էր մայր հողից: «Նույնիսկ երբ նրան 2008թ. առաջարկեցին ՀՀ-ում ավելի բարձր պաշտոն, քան նա զբաղեցնում էր

Արցախում, հայրս մերժեց», - նկատում է Սլավան:

Յարդուբյաններից մեկի ժամանակ Սերգեյ Շաքարյանն ասել էր, որ հպարտ է հայրենիքի սահմանները պաշտպանելու և զոհված տղաների գործը շարունակելու համար:

Բնավորությամբ հանգիստ, բարի, անմիջական, բայց և խստապահանջ մարդ էր Սերգեյ Շաքարյանը:

«Հաճախ էր բորբոքվում, սակայն՝ ոչ անտեղի: Դժվար է լինել հազարավոր զինվորների հրամանատար ու հանգիստ մնալ», - ասում է Սլավան: Նա մատնեցի վրա է հաշվում այն մի քանի ամանորները, որ դիմավորել են հոր հետ: «Միշտ գործառնում կամ դիրքերում զինվորների հետ էր դիմավորում Նոր տարին», - հիշում է որդին:

Չինակից ընկերներից Արման Հակոբյանի խոսքով՝ Սերգեյ Շաքարյանը զինվորի մասին մտածող, սրտացավ հրամանատար է եղել. «Ձմռան սկզբին նրա առաջին հրամաններից մեկն այն էր, որ զինվորին ոչ թե նորմալով վառելափայտ հատկացնեն, այլ այնքան, որ զինվորը չմոռնա և պատրաստ լինի», - ասում է Արման Հակոբյանը:

Սլավան հպարտությամբ է հիշում հերոս հայրիկին: Ափսոսում է, որ եղել են դեպքեր, երբ չի հետևել հոր խորհրդին. ջախել էր, տաքարյուն՝ ինչպես բոլոր երիտասարդները: «Հայրական խրատներ շատ էր տալիս, սա-



կայն ամենակարեւորն այն էր, որ միշտ ասում էր՝ որտեղ էլ լինեք, ինչ էլ անեք, միշտ մարդ մնանք», - ասում է Սլավան:

Որդիներին դեռ փոքր տարիքից գնդապետ Շաքարյանը զինվոր է մեծացրել: Շատ է պատմել պատերազմի մասին, սակայն միայն պատերազմի միջով անցնելուց հետո Սլավան հասկացավ, թե իրականում ինչ է պատերազմը: Քիչ էր մնացել գորացրվելուն, երբ սկսվեց պատերազմը:

Առհասարակ ներամփոփ էր Սերգեյ Շաքարյանը: Տանը չէր խոսում բանակային կյանքից ու խնդիրներից, անգամ ընտանիքին ու ժամկետային զինծառայող որդուն չի զգուշացրել սպասվող պատերազմի մասին:

«Իհարկե, հայրիկս էլ նախօրոք չէր իմացել պատերազմի մասին, միշտ պատրաստ էր: Նա երբեք էլ պատերազմը ավարտված չէր համարել: Նույնիսկ ես էի կռահում մոտալուտ պատերազմի մասին՝ տեսնելով թշնամու զորավարություններն ու սպանազնակները», - ասում է Սլավան:

Պատերազմի հենց սկզբից Սերգեյ Շաքարյանը հրամանատարական կետերում էր:

Հոր հետ միայն հոկտեմբերի սկզբներին է կարողացել կապվել՝ ներքին կապով, երբ արդեն հայրն արժանացել էր «Արցախի հերոս»-ի կոչման, որն այդպես էլ անձամբ ստանալ չի կարողանում. պատերազմ էր, պետք էր կռվել ու դիմակայել թշնամուն:

«Ուրախությանս ու հպարտությանս չափ ու սահման չկար: Բառերով չեմ կարող նկարագրել այն պարունակները, որ ունեցա մարտի դաշտում, իմանալով այդ մասին: Չանգեցի, շնորհավորեցի, սակայն ասաց, որ պատերազմ է: Ձայնը կտրված էր, բառերի միայն 20-25 տոկոսն էի հասկանում», - պատմում է Սլավան:

Խիզախ մարտիկն ու հրամանատարը ոչ մի անգամ մեկն չէր թողնում իր զինվորներին, վերջիններս էլ նրա ներկայությունից էին ոգևորվում, երբ դիրքից դիրք էր այցելում: Այդ ժամանակ նույնիսկ հեռաձայնով նրա ասած մի խոսքը ոգևորում էր դիրքի անձնակազմին:

Արման Հակոբյանի խոսքով՝ պատերազմի ժամանակ ամենակարեւոր որոշումները գնդապետ Շաքարյանն էր կայացնում, և նրա տված կորդինատները երբեք սխալ դուրս չէին գալիս:

Ինչպես Սերգեյ Շաքարյանն էր ասել ժամանակին՝ թշնամու հետ բառերով խոսել չի կարող, իրենը միայն

գեղեցիկ է ու իր զորամասի գործողությունները: Խոսքը գործ էր: Ասաց ու արեց: 30 տարի անց՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված լայնամասշտաբ պատերազմի ժամանակ կրկին մարտի դաշտում էր արդեն գնդապետ Շաքարյանը և իր հմուտ ղեկավարությամբ ետ էր մղում թշնամու հարձակումները: Հավատարմով իր զինվորների ոգու արիությանը, առաջնորդում էր նրանց մարտի դաշտում և մեկ ամիս շարունակ՝ մինչև իր զոհվելու չարաբաստիկ օրը, անխնայ կոտորում ու ետ էր մղում թշնամու բոլոր գործերը՝ ձախողելով նրա պլանները: Չնայած թշնամու մեծաթիվ գործերին և անհավասար մարտերին, գնդապետ Շաքարյանի հմուտ ղեկավարմամբ թշնամին կորուստներով ետ էր շարժվում: Հիշատակման է արժանի նաև այն փաստը, որ գնդապետ Շաքարյանի որոշումներով ոչ միայն ոչնչացվում էր թշնամին, այլ նաև փրկվում էին հարյուրավոր յուրայինների կյանքեր:

Արման Հակոբյանը նշեց, որ Սերգեյ Շաքարյանը լինելով Յարդուբից, գերագնաց տիրապետում էր տարածքին: «Նաղաղ ժամանակ տեղաշարժվելիս միշտ տարբեր ճանապարհներով էինք գնում. նա պետք է ուսումնասիրեր ճանապարհային ցանցը, և հենց պատերազմի ժամանակ, երբ շրջափակման մեջ էինք, տեղանքի իմացությունն օգնեց, որպեսզի մեզ դուրս բերի շրջափակումից», - ասում է նա:

Չկարողանալով ճեղքել բնագիծը, թշնամին փորձում էր շրջանցել՝ գրոհելով այլ ուղղությամբ, կիրառելով իր ողջ արսենալն ու թուրքական բայրակաբարները: Կատաղի մարտերում Սերգեյ Շաքարյանը չէր ընկրկում: Թշնամուն հաջողվում է թիկունքից ճեղքել և շրջափակման մեջ վերցնել Սերգեյ Շաքարյանի հրամանատարական կետը, սակայն նրան հաջողվում է դուրս գալ շրջափակումից՝ փրկելով նաև իր զինակիցների կյանքը:

Երբ հարեան դիվիզիայի հրամանատարը հոկտեմբերի վերջին ծանր վիրավորվեց, գնդապետ Շաքարյանը շտապեց այդ բնագծի պաշտպանությունը կազմակերպելու:

Այստեղ ես նա հաջողություններ է գրանցում, սակայն հոկտեմբերի 25-ին, թշնամին իմանալով նրա տեղը, թուրքական Ֆ-16 ինքնաթիռի հատուկ հրթիռով հիթոնակոծում է այն հրամանատարական կետը, որտեղ տեակայված էին գնդապետ Շաքարյանն ու իր մարտական ընկերները: Անսպասելի հրամանատարն ու անվախ մարտիկն ընկավ հենց այն նույն տարիքում և հենց այն նույն օրը, երբ զոհվել էր նրա հայրը՝ Սլավա Շաքարյանը:

Արման Հակոբյանը հիշում է, երբ դեպքից ընդամենը 3 րոպե առաջ ներքին կապով գնդապետ Շաքարյանը շնորհավորել էր նրան՝ «Մարտական խաչ» 1-ին աստիճան ստանալու համար, ասելով, որ սա դեռ վերջը չէ:

Սլավայի խոսքով, տեսնելով մարդկանց տարօրինակ պահվածքն իր ներկայությամբ, անմիջապես հասկացել է, որ ինչ-որ մի բան այն չէ: Անմիջապես կապ հաստատելով հոր զինակցի հետ, նրանից էլ իմացել է հոր մահվան բոթը:



Սլավա Շաքարյան, Սեանկ Շաքարյան

«Գնահատում եմ կարճ ու կոնկրետ խոսքը: Լավ է, որ չէր կարեցրեց», - ասում է Սլավան:

«Մեծ է կորուստն առաջին հերթին ամբողջ ազգի, և ապա՝ մեր ընտանիքի համար», - նշում է Սլավա Շաքարյանը:

Բեկումնային էր հրամանատարի անդառնալի կորուստը: Սլավա Շաքարյանը համոզված է, որ եթե հայրը չընկեր, պատերազմն այլ ընթացք ու ավարտ կունենար:

Գնդապետ Շաքարյանը հայրենիքի նվիրյալ զավակ էր: Նրան չէին հետաքրքրում օրվա իշխանությունները: Նա լուռ ու անխոսք իր պարտքն էր կատարում հայրենիքի առջև: Նա համոզված էր, որ մենք մշտապես պետք է պատրաստ լինենք՝ դիմակայելու թշնամուն, և առաջնահերթ առաջնագծում պետք է իշխողի դերում լինենք: Այս համոզմամբ էլ կատարեց իր առջեւ դրված մարտական խնդիրներն ու մինչև վերջին շունչը անառիկ պահեց իրեն վստահված սահմանները:



### Քննարկում ավագ եւ երիտասարդ սերնդի ուսուցիչների միջեւ

Ուսուցչի միջազգային օրը ուսուցիչներին նվիրված տոն է, որը նշվում է ամեն տարի՝ սկսած 1994 թվականի հոկտեմբերի 5-ից: Օրվա ընտրությունը կապված էր այն հանգամանքի հետ, որ



1966 թվականի հոկտեմբերի 5-ին Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից հրավիրված համատեղ կոնֆերանսում ընդունվել է «Ուսուցչի կարգավիճակի հետ կապված ուղեցույց» (Recommendation concerning the Status of Teachers) վերառաջադրված փաստաթուղթը, ինչն էլ ուսուցիչների աշխատանքը կարգավորող առաջին միջազգային փաստաթուղթն էր: Ուսուցիչների տոնը նշվում է ավելի քան 100 երկրներում, այդ թվում՝ Հայաստանում:

Այդ առիթով ՀՀ-ի Արցախի երիտասարդական միության «Արտակա իշխանական» խումբը նախաձեռնել է «Ուսուցիչների դերը հետպատերազմյան շրջանում սերունդների վերադաստիարակման գործում» թեմայով քննարկում ավագ եւ երիտասարդ սերնդի ուսուցիչների միջեւ:

Հանդիպմանը հրավիրված էին ՀՀ-ի Արցախի ԿԿ, ՀՀ-ի «Արթուր Մկրտչյան» կոմիտեի անդամներ, Արցախի Հանրապետության նախագահի՝ կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերով խորհրդակցական Արմեն Սարգսյանը, ԱԿ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի խորհրդակցական Մելանյա Բալայանը, ուսուցիչներ եւ դասախոսներ:

Միջոցառման սկզբին ՀՀ-ի ԱԿ-ի կենտրոնական վարչության անդամ Տիրուհի Գասպարյանը ՀՀ-ի Արցախի երիտասարդական միության անունից շնորհավորեց ուսուցիչներին՝ իրենց մասնագիտական տոն օրվա առթիվ՝ նշելով, որ նրանց դաստիարակության արդյունքը հայրենիքը սեփական կյանքից վեր դասած սերունդն էր:

Տիրուհի Գասպարյանը կարեւորեց ուսուցիչների դերը հատկապես հետպատերազմյան շրջանում սերունդներ կրթելու գործում, քանի որ նրանք են լինելու իրենց հերոս եղբայրների ու

հայրերի վեհ գործի շարունակողը, իսկ դա առաջնահերթ կերպով կարող է կատարվել դպրոցում ստացած հայեցի դաստիարակության շնորհիվ:

ՀՀ-ի Արցախի ԿԿ անդամ Ալյոնա Դադամյանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ այս միջոցառման նպատակն է, որ երիտասարդներին պարզ լինի ուսուցիչների պատկերացումները ստեղծված իրավիճակից դուրս գալու հարցում:

«Ավագ ուսուցիչները 30 տարի երեխաներին դաստիարակել են հաղթանակի ոգով, սակայն այժմ երիտասարդ ուսուցիչները աշակերտների դիմաց պետք է կանգնեն մեր պարտությունից հետո, եւ կարծում եմ՝ ավագ սերունդը նրանց ասելիք ունի, թե ինչպիսի դաստիարակություն պետք է տան աշակերտներին եւ ինչպես վարվեն ստեղծված ծանր կացությունում», -

ասել է Ալյոնա Դադամյանը: ԱՀ ԿԿՄՍ նախարարի խորհրդակցական Մելանյա Բալայանը, շնորհակալություն հայտնելով կազմակերպված միջոցառման համար, նշեց, որ երկրի անվտանգության հիմքը դրվում է հենց դպրոցում, եւ, ցավոք, այսօրվա դպրոցը բարեփոխումների կարիք է զգում:

«Այսօր մեր կրթական համակարգը համարժեք է երկրում տիրող իրավիճակին: Անկախության տարիներին ուսման պրոցեսը բարձր մակարդակի դնելու փոխարեն հակառակ ուղղությամբ ենք գնացել եւ այսօր էլ շարունակում ենք գլորվել դեպի անդունդը: ցավոք, նույնիսկ փորձեր էլ չեն արվում իրավիճակը շտկելու համար», - իր խոսքում ասել է Մելանյա Բալայանը:

Հայ իրականության մեջ ուսուցչի դերը միշտ էլ բարձր է եղել: Կորյունն իր «Վարք Մաշտոցի» գրքում Մաշտոցին մեծարում է ոչ թե տառերը ստեղծելու, այլ իր ուսուցիչը լինելու համար:

«Ուսուցիչները երկրի վրա քայլող աստվածներ են», - իր խոսքում շեշտեց Ա. Սարգսյանը: Ըստ նրա՝ ուսուցիչը եւ դաշնակցականը ունեն նմանություն: դաշնակցական եւ ուսուցիչ ոչ թե դառնում են, այլ՝ ծնվում:

ԱՀ ԱԿ ՀՀ-ի խմբակցության անդամ, դասախոս Վահրամ Բալայանի խոսքով՝ մենք պարտավոր ենք հողում չենք ապրում: Այս հողը, պարտություններից զատ, նաեւ շատ հաղթանակներ է տեսել, ուստի մենք պետք է մեր մեջ ուժ գտնենք լավագույն ավանդույթները մատաղ սերունդին ներկայացնելու գործում:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ի Արցախի ԿԿ-ի եւ «Արթուր Մկրտչյան» կոմիտեի անդամներ:

Միջոցառման ավարտին ուսուցիչներն ու դասախոսները ՀՀ-ի ԱԿ-ի կողմից ստացան խորհրդանշական նվերներ ու ծաղիկներ:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

### «Մենք կվերադառնանք. փրկված պատառիկներ» խորագրով ցուցահանդես՝ Ստեփանակերտում

«Եվրոպա» հյուրանոցի նախարարական տեղի է ունեցել «Մենք կվերադառնանք. փրկված պատառիկներ» ցուցահանդեսի բացման արարողությունը, որտեղ հոկտեմբերի 11-ից մինչեւ նոյեմբերի 11-ը ներկայացված են լինելու 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեյջանի կողմից Արցախի բռնազավթված տարածքներից հոգեւոր եւ մշակութային արժեքներ:

Ցուցահանդեսը կազմակերպվել է «Մշակութային ժառանգության հանրային խորհրդի», «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի եւ «Եվրոպա» հյուրանոցի համատեղ ջանքերով:



Ցուցահանդեսին ներկա էին ԱՀ ԿԿՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, Մշակութային ժառանգության հանրային խորհրդի նախագահ Սերգեյ Շահվերդյանը, խորհրդի անդամներ Լեռնիկ Զովհաննիսյանը, Զովիկ Ավանեսովը, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Դազակչեցոց եկեղեցու հոգեւոր հովիվ, Արցախի թեմի հոգեւոր սպասավոր Տեր Անդրեաս քահանա Թավադյանը, մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ, հյուրեր:

«Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմինե Հայրապետյանը նշեց, որ փրկված պատառիկներից յուրաքանչյուրն ունի իր հետաքրքիր ճակատագիրը:

«Ես ուզում եմ հավատալ, որ մի

գեղեցիկ օր այս պատառիկներից յուրաքանչյուրը կվերադառնա իր տեղը», - ասել է նա:

ԱՀ ԿԿՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը նշեց, որ յուրաքանչյուր ցուցանմուշի մեջ կա մեծ լռություն: Լռություն, որի մեջ սուսկալի աղաղակ կա ու այդ աղաղակը մեզ ավելի թշվառ է դարձնում:

«Մենք թշվառ չեինք, բայց թշվառ է դարձնում, ու այդ էպիզոդիկ թշվառությունն իրականում մեզ դարձնում է վրեժխնդիր, լցնում ատելությամբ, մղում խիզախման, եւ չնայած այս հակասական զգացողություններին՝ պարուրում են վերադառնալու զգացումով», - ասել է նա:

Մշակութային ժառանգության հանրային խորհրդի նախագահ Սերգեյ Շահվերդյանն ասաց, որ իրենց նախաձեռնությանը միանգամից արձագանքեցին պետական մարմիններն ու բազմաթիվ անհատ անձինք:

«Ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքների ժամանակ մենք հասկացանք, որ փրկված պատառիկները միայն մեր ձեռքի տակ եղածները չէին, որովհետեւ բազմաթիվ մարդիկ սիրով տրամադրեցին իրենց կողմից փրկված նմուշները», - նշել է նա:

Սերգեյ Շահվերդյանը հույս հայտնեց, որ դեռեւս կգտնվեն այլ «փրկված պատառիկներ», որոնք տեղ կգտնեն ներկայացված ցուցանմուշների կողքին:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

### «Ոսկե արծիվ» շքանշանակիր Սերգեյ Շաքարյան

4 ← Սլավան Արտուրով է, որ հայրն այդպես էլ չի ենթարկվել նահանջի բազմակի հրամաններին, այդ իսկ պատճառով էլ ամուր է պահել բնագիծը:

Արման Հակոբյանն էլ չի հիշում մի դեպք, որ գնդապետ շաքարյանը նահանջի հրաման տված լինի:

«Նույնիսկ եթե այդպիսի հրաման ստանար գնդապետ Շաքարյանը, նա չէր ենթարկվի, քանի որ պաշտպանությունն այնպես էր կազմակերպված, որ մենք փայլուն կատարում էինք մեր առջեւ դրված խնդիրները՝ թշնամուն պատճառելով հսկայական կորուստներ, եւ այդ ամենը տեսնելով՝ ինքներս չէինք ուզում եւ չէինք էլ մտածում նահանջի մասին», - պատմում է Արման Հակոբյանը:

Հոր եւ ապա հայրենի տան ու ողջ ունեցվածքի կորուստը Շաքարյանների մոտ չի կտրել հավատը վաղվա օրվա հանդեպ:

«Հիմա նյութական կորուստի մասին չենք էլ մտածում: Եթե ոչ հիմա, ապա գոնե մի 20 տարի հետո, վստահ եմ, կորցրած հողը կազատագրենք, քանզի տունը կկառուցենք, սակայն մարդկային կորուստն անդառնալի է», - ասում է Սլավանը:

Նա արդեն ավարտել է ծառայությունն ու սովորում է Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական համալսարանում. դառնալու է տեղեկատվական անվտանգության ոլորտի մասնագետ: Հոր երազանքն էր որդուն կայացած տեսնել, ուստի նա փորձել է ամեն ինչ անել դրա համար եւ իր մասնագիտությամբ ծառայել երկրին, այդպիսով նաեւ հոր գործը շարունակել:

Գնդապետ Շաքարյանի կրտսեր որդին՝ Սեւակը, վերջերս է գորակոչվել բանակ, ինչի առթիվ Սլավան Ֆեյսբուքյան իր էջում գրառում էր արել. «Ես ու Սեւակը գիտենք, թե ինչու պետք է նա ծառայի»:



«Ե՛վ ես, ե՛ւ Սեւակը կարող էինք ծառայել այնպես, ինչպես «ծառայում են» շատ պաշտոնյաների գավակներ: Սակայն հայրս միշտ ասում էր, որ մենք պետք է ծառայենք իսկական տղամարդուն վայել կերպով: Սեւակը պիտի ծառայի հանուն մեր հոր հիշատակի, հանուն նրա հոգու հանգստության», - անկեղծանում է Սլավանը:

Գնդապետ Շաքարյանի ընտանիքն այժմ հաստատվել է Երեւանում եւ միառժամանակ կման այդտեղ, մինչեւ գավակները կայանան, սակայն Արցախ վերադառնալու միտքը մշտապես ուղեկցում է Սլավային: «Ընդհանրապես, Հայաստան-Արցախ տարբերություն չեն դնում, սակայն յուրաքանչյուր մարդու համար հարազատ է իր ծննդավայրը», - նշում է նա:

Վստահ է՝ որոշ ժամանակ անց ամեն ինչ են կրթենք հանուն մեր գոհերի հիշատակի, սակայն կարծում է, որ պետք է փոխվենք ու ինքնամաքրվենք:

«Միայն հայրենասիրությամբ երկիր չես կառուցի, դրանից զատ պետք է միասնակամարտություն, համերաշխություն ու հավատարմություն, որպեսզի կրկին մեքեցի հարված չստանանք», - ասում է Սլավանը:

Գնդապետ Սերգեյ Սլավայի Շաքարյանն այն եզակի հրամանատարներից է, որին չեն մոռանում իր զինվորները: Շատերն անգամ փորձելով նմանվել նրան՝ վերադառնում էին զորամաս եւ ծառայության անցնում այդտեղ: Բոլոր հրամանատարներին չի հաջողվում զինվորի համար իդեալ դառնալ: Նրա հաջողության գաղտնիքը հենց իր մարդ տեսակի, զինվորի հետ իր անմիջականության, զինվորի հանդեպ իր սկիզբածության ու տածած հոգատարության մեջ է:

Գնդապետ Շաքարյանն իր անունը ոսկե տառերով գրեց Արցախյան ազատագրական պայքարի տարեգրության մեջ եւ միշտ կմնա սերունդների հիշողության մեջ:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Առանց նրանց շարունակում եք օրհասի վերջին շունչը կյանք դարձնել ու վերքերից երգեր ձոնել

Այսօր մեր հայրենիքին պատուհասած ծանր պայմաններում ենք վերաթեքվում ուսուցչի տոնի խորհուրդը՝ կորսված եւ բազմաթիվ հայրենիքի այրող կարոտով, նահատակված աշակերտության հիշատակը խնկարկելով: Այժմ մեզ հիշում են ֆիզիկապես բացակա են նաև իրենց կյանքը հայրենիքին նվիրաբերած ուսուցիչները, զինղեկներն ու տնօրենները: Այս մասին Ուսուցչի տոն օրվա առթիվ գրառում է կատարել Արցախի Հանրապետության գիտության, կրթության, մշակույթի եւ սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը՝ հրապարակելով 44-օրյա պատերազմի օրերին նահատակված ուսուցիչների անունները:

**Հայասեր Էդուարդի Հովսեփյան** - Մարտունու շրջանի Ծովատեղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ,

**Արմեն Մաքսիմի Շահնազարյան** - Հաղարծնի շրջանի Զյուրաբաղի միջնակարգ դպրոցի զինղեկ,

**Չաքար Արմիկի Սարգսյան** - Հաղարծնի շրջանի Տոգի միջնակարգ դպրոցի զինղեկ,

**Արմեն Բորիսի Դուլուխանյան** - Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի զինղեկ,

**Հարութ Ալեքսանդրի Պետրոսյան** - Վալուկիսի հիմնական դպրոցի զինղեկ,

**Սուրեն Աշոտի Հովհաննիսյան** - Փակահանի միջնակարգ դպրոցի զինղեկ,

**Մելիքսեթ Սահակի Սահակյան** - Ասկերանի շրջանի Ազնեցի միջնակարգ դպրոցի տնօրեն

**Գրիգորի Եղիշեի Ղահրամանյան** - Ասկերանի շրջանի Սղևախի միջնակարգ դպրոցի ուսուցիչ,

**Արթուր Հովհիկի Սարգսյան** - Մարտունու շրջանի Մաճկալաշենի միջնակարգ դպրոցի ուսուցիչ,

**Սասուն Շուրայի Ամիրջանյան** - Հաղարծնի շրջանի Մարիամաձորի միջնակարգ դպրոցի զինղեկ,

**Գեորգ Հրայրի Սիմոնյան** - Զառաթաղի շրջանի Ուռեկանի միջնակարգ դպրոցի

զինղեկ,  
**Էրիկ Միշայի Պետրոսյան** - Շահումյանի շրջանի Չուարի միջնակարգ դպրոցի զինղեկ,

**Գեորգ Ռաֆայելի Կիրակոսյան** - Շահումյանի շրջանի Հավաթաղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ,

**Աշոտ Արայի Կոստանյան** - Զառաթաղի շրջանի Ուռեկանի միջնակարգ դպրոցի ուսուցիչ...

«Առանց նրանց, այո՛, սիրելի՛ ուսուցիչ, առանց նրանց, շարունակում եք օրհասի վերջին շունչը կյանք դարձնել ու վերքերից երգեր ձոնել:

Քանի՛, քանի՛ նահատակվածներ շարունակում են աշակերտ մնալ Ձեր մեջ՝ ներշնչելով Ձեզ նոր սկիզբ ու ընթացք, անմահության խոստում:

Սիրելի՛ ուսուցիչ, մեր հերթական գոյամարտը նոր իմաստավորումներով է դնում հայրենիքի, արարչի, ստեղծագործ կյանքի, կրթության ու դաստիարակության, բարձրագույն ապրումների ու արժեքների եւ, ի վերջո, կյանքի հաստատման գաղափարը:

Մեր գոյության, գիտելիքի, իմացության, արժեքների սերմանման ողջ ընթացքում դուք եք դարձնել միտքն ու ոգին՝ ցրելով աշխարհի ունայնության եւ մարդու անցավորության գաղափարը: Դուք անվարան հաղթահարել եք եւ շարունակում եք հաղթահարել մեր համակարգի առջեւ ծառայած խնդիրներն ու մեր հայրենիքին պատուհասած անողորմ փորձությունները:

Այսօր եւս Ձեզ է վերապահված դառնալու ժամանակի առաջնորդը, բարոյական ու հոգեւոր սննդի անսպառ ռաբունապետը:

Հատկի աստվածաշնչյան օրինակով մենք նորից ծիլ կտանք, իսկ դուք նորից կդառնաք ճշմարտության, ազատության եւ ուժի սերմանման գաղափարական կնքահայրը:

Դուք վաստակել եք», - գրել է ԱՅ ԿԳՄՍ նախարարը:



## Կրթության շրջանակներում աշակերտներին պետք է փոխանցել կիրառելի գիտելիքներ. Մաղավուզում հաստատված ուսուցիչ

Պատերազմից հետո բավականին բարդ էր դասավանդմանը վերադառնալը, բայց ամենակարեւորը կրթության կարեւորության գիտակցումն է: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է Մաղավուզի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Արտավազ Բոյաշյանը: Երեւանի պետական համալսարանի Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա բաժնի շրջանավարտ Արցախում հաստատվել է մի քանի տարի առաջ եւ «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի շրջանակներում երկու տարի դասավանդել Ստեփանակերտի Ֆիզմաթ դպրոցում:

տասարդ ուսուցիչը համարում է բնագիտական առարկաների հանդեպ ուշադրության պակասը, ինչպես նաեւ պատրաստված մասնագետների սղոյությունը: «Պետք է ճիշտ կադրեր պատրաստել եւ ցույց տալ, որ իրականում ուսուցչի գործը պատվաբեր լինելուց բացի՝ նաեւ եկամտաբեր է: Այսօր բոլորը եկամտի աղբյուր գտնելու ցանկությամբ այլ աշխատանքներ են փնտրում, կամ էլ արտագնա աշխատանքի են մեկնում», - նշում է Արտավազը:

Նա Մաղավուզում չի սահմանափակվում ուսուցչի գործունեությամբ. Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Արցախի գրասենյակի հովանավորությամբ ազգային պարեր է ուսուցանում, նաեւ «Տրտու» արշավական ակումբի միջոցով ճանաչողական արշավներ է կազմակերպում: Ըստ Արտավազի՝ արշավները մարդկանց օգնում են բացահայտել իրենց երկիրը, ճանաչել եւ սիրել այն, քանի որ՝ եթե մի բան չես ճանաչում, չես կարող սիրել: «Իսկ ազգային պարը կապված է մեր մշակույթի, ինքնության հետ: Եթե մենք չգիտենք մեր մշակույթը, ո՞նց կարող ենք մեզ հայ համարել: Ուղղակի ասելով, ստատուսներ, մեկնաբանություններ գրելով կամ թշնամու գրառումներին պատասխանելով՝ հայ չենք դառնում: Նախ պետք է մենք մեր ինքնությունը ճանաչենք: Ազգային երգն ու պարը ուղղակի հնչյուններ ու շարժումներ են: Դրանք մեր ինքնության մի մասնիկն են, որը մեզ է փոխանցվում գենետիկ կոդերով», - ասում է մեր զրուցակիցը:



«Երկու տարվա ծրագրի ավարտից հետո կարող էի իմ ընտրությամբ ծրագրից դուրս գալ կամ շարունակել: Որոշեցի մնալ Արցախում: Քանի որ այդ ժամանակահատվածում արդեն սկսել էր այգեգործությամբ զբաղվել, տեղափոխվեցի Մաղավուզ գյուղ, «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի երրորդ տարվա ծրագրի մասնակից դարձա եւ շարունակեցի մի տարի էլ դասավանդել: Հիմա դասավանդում եմ «Մաթեմատիկա առարկա», - նշում է Արտավազ Բոյաշյանը:

Նրա խոսքով՝ մերօրյա ուսուցչի առաքելությունն առաջին հերթին գիտակից քաղաքացի դաստիարակելն է: «Կրթությունը տարիներ շարունակ հետին պլան մղվելով, չկարեւորելով կրթական ռազմավարությունը, չենք կարողացել ճիշտ կրթություն տալ սերունդներին, որի հետեւանքը տարիներ հետո է երեւացել: Հիմա նախ պետք է ճիշտ կրթություն տալ երեխաներին, կրթության շրջանակներում նրանց փոխանցել կիրառելի գիտելիքներ. դա արդեն կլինի ամենամեծ ձեռքբերումը», - կարծում է ուսուցիչը:

Կրթության ոլորտի ամենամեծ բացթողումը երի-

## Գիտակից աշակերտներն են մեր ուժը եւ ապագայի անկոտրում հույսը

Թշնամական դիրքերից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող Մարտակերտի շրջանի Կիչանի եւ Ղազանչիի Կարեն Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցի Հայոց լեզու եւ գրականություն առարկայի ուսուցչուհի Օլյա Աղաջանյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է, որ հիմա կարեւոր խնդիր է ապագայի հանդեպ հավատի վերականգնումը:

«Շատ կարեւոր է թշնամու տեսողաշտում գտնվող մեր աշակերտներին առաջին հերթին հոգեբանորեն կոփել, որպեսզի ցանկացած կրակոցի ձայն լսելիս չվախենան, խուճապի չմատնվեն: Միեւնույն ժամանակ, մենք՝ ուսուցիչներս, պետք է այնքան զգոն լինենք, որ կրակոցի դեպքում անգամ աշակերտներին անվտանգ տեղ տանենք», - կարծում է ուսուցչուհին:

Նրա խոսքով՝ նախքան պատերազմն այսպիսի խնդիր չունեին եւ այս չափի պատասխանատվություն չկար իրենց ուսերին:



Իհարկե, կային աշակերտներ, որոնք հոգեբանական այս կամ այն խնդիրն ունեին, բայց այսօր վախի հաղթահարման խնդիր ունեն բոլորը: Ինչ վերաբերում է դասապրոցեսին, ապա այն ընթանում է սովորականի պես, բայց ցանկացած ձայն, մեքենայի երթուղիները գրավում է աշակերտների ուշադրությունը: «Երեխաներն էլ շատ լավ հասկանում են, որ խոր թիկունքում չենք ապրում, այլ արդեն սահման ենք եւ թշնամուց ամեն ինչ սպասելի է: Ես հիմնականում բարձր դասարաններում եմ դասավանդում, եւ շատ հաճախ գոտեպնդվում եմ մեր պատանիների խոսքերից, քանի որ հաճախ եմ լսում, թե ինչքան պատրաստակամ են՝ բանակ գնալ, հայրենիքին ծառայել: Գիտակից աշակերտներն են մեր ուժը եւ ապագայի անկոտրում հույսը»:

Ըստ Օլյա Աղաջանյանի՝ ուսուցիչ դառնում են, սակայն ոչ բոլոր ցանկացողներն են կարող դա անել, քանի որ ոչ բոլորն ունեն համապատասխան գիտելիքներ, համբերություն ու պատասխանատվություն:

«Իմ իղեալն այն ուսուցիչն է, ով սիրում է իր մասնագիտությունը եւ անմաքուր նվիրվածությամբ աշխատում է աշակերտների գրագիտության ու դաստիարակության համար», - ասում է նա:

«Ապառաժ»

Տարբերակ ԱՐԱՋԱՆՅԱՆ

### Մեզ համար պատերազմը չի ավարտվել

Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ներքին Ազնեք գյուղը Արցախյան առաջին պատերազմի ժամանակ ապաստարան էր ծառայում շրջակա համայնքների բնակիչների համար, իսկ այս պատերազմից հետո հայտնվել է թշնամու ուղիղ նշանառության տակ: Ադրբեջանական դիրքերը տեղակայված են որոշ բնակելի տներից 100-200 մետր հեռավորության վրա:

Համայնքի ղեկավար Էդուարդ Մուսայեյանն «Ապառաժ»-ի հետ զրույցում վերհիշել է 1990-ական թվականներին գյուղում տիրող մթնոլորտը: Նրա խոսքով՝ գյուղացիներն իրենց տներում ապաստանել էին Ստեփանակերտի, Շոշի, Զարին տակի բնակիչներին: «Նրանք մնում էին մեր տներում, հաց էինք կիսում: Այն ժամանակ որոշ բնակավայրերում հացի խնդիր էլ կար: Հիմա թեկուզ այդ առումով խնդիր չկա, բայց այն ժամանակվա ոգին, տրամադրվածությունն ուրիշ էր»,- նշել է նա:

Արցախյան առաջին պատերազմի հետեւանքով գյուղից 12 զոհ, մեկ անհետ կորած կային, այս պատերազմի ընթացքում հայրենիքի պաշտպանության ժամանակ նահատակվել է 5 սզնեքցի, որոնցից 3-ը գյուղում էին ապրում, 5-ն էլ՝ վիրավորվել: Պատերազմի վերջին օրը վիրավոր համապոլագունն դուրս բերելու ժամանակ վիրավորում է ստացել նաև համայնքի ղեկավարը:

Նրա խոսքով՝ մտքներով երբեք չի անցել, որ այսպիսի իրավիճակում կհայտնվեն: «Այս

անսպասելի վիճակը ազդել է բոլորին: Այս կռիվը գեղի կռիվ էր, հերոսությունն ու հայրենասիրությունը հերիք չէին»,- նշում է Արցախյան առաջին պատերազմի մասնակից համայնքի ղեկավարը:

Երկու կողմից ադրբեջանական դիրքերով շրջափակված Ներքին Ազնեքում բնակիչները զրկվել են լիարժեքորեն գյուղատնտեսությամբ եւ անասնապահությամբ զբաղվելու հնարավորությունից: Թշնամու վերահսկողության տակ է հայտնվել վարելահողերի, արոտավայրերի, խոտհարքների մի մասը: Համայնքի սեփականությունը համարվող 140 հա-ից 53 հա վարե-

լահող է մնացել սահմանագծից այն կողմ: Գյուղը գազաֆիկացված չէ, եւ համայնքի համար շատ կարեւոր էր անտառային զանգվածից օգտվելը, որը հիմա հնարավոր չէ:

Պատերազմի օրերին գյուղը շատ է հրետակոծվել, վնասվել են 20-ից ավելի բնակելի տներ: Ներկայումս դրանք մեծամասամբ վերականգնված են:

Սակայն թշնամական դիրքերն այնքան մոտ են, որ այնտեղից տների ներսն էլ է տեսանելի. գիշերները լուսարձակներ են միացնում, օդ կրակում: Էդուարդ Մուսայեյանի կարծիքով՝ դրանով փորձում են ճնշված պահել ժողովրդին, ստիպել, որ դուրս գան, հուսահատվեն: Իսկ չեն հուսահատվում՝ հարցին՝ համայնքի ղեկավարն արձագանքում է՝ «Եթե հուսահատվող լինեին, չէին մնա»:

Գյուղի խնդիրներից նա առանձնացնում է ջրի ներքին ցանցի կառուցումը, գազաֆիկացումը, ճանապարհների բարելավումը: Բայց այս բոլոր խնդիրները երկրորդական է համարում, ամենակարեւորը բնակիչների անվտանգության ապահովումն է: «Մեզ համար կռիվը դեռ չի վերջացել: Ինչքան տեսնում եմ, մեզնով հարց չի լուծվում, խաղաքարտերը մեծ տերությունների ձեռքին են: Մեզնից կախվածն այն է, որ կարողանանք բանակը պահել, եղածը պահել, վերականգնվել: Բայց կարգավիճակի հարցը պիտի լուծվի»,- կարծում է Է. Մուսայեյանը:

Տարեիկ Աղաջանյան



### Մեր զինվորը չի պարտվել, ժողովուրդը չի պարտվել, պարտվել է ռազմաքաղաքական ղեկավարությունը

Ասկերանի շրջանի Կարմիր գյուղը հարյուրամյակների պատմություն ունի: Նախկինում գյուղը կոչվում էր Տոնավազ: Այն առաջացել է «Տեր Ավեգ» անունից, ով այս բնակավայրի հիմնադիրն է եղել: Նախկին բնակավայրը գտնվում էր 1,5 կմ հեռավորության վրա՝ «Կալերահող» տեղամասում:

Գյուղի պատմությանը քաջատեղյակ Կարմիր գյուղի միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցիչ Հրանտ Ավետիսյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է, որ ջրի սակավության պատճառով են գյուղացիները տեղափոխվել նախկին

ներով, զոհերի անհամաչափությամբ: 1990-ական թթ. պատերազմական ջոխտարում այսքան զոհ չենք տվել», - ասում է նա՝ համոզված, որ դավաճանություն է եղել: Նրա խոսքով՝ մեր զինվորը չի պարտվել, ժողովուրդը չի պարտվել, պարտվել է ռազմաքաղաքական ղեկավարությունը:

«Հնարավոր չէ, որ պարտված պետության ղեկավարը մնա իր տեղում: Միայն ինքնասիրությունը կորցրած մարդիկ կարող են նման իրավիճակում, նման ամոթալի պարտությունից հետո նորից հանդգնեն շարունակել իրենց քաղաքականությունը: Միգուցե թուրքական հետախուզական աշխատանքների արդյունք է», - կարծում է Հ. Ավետիսյանը: Նա գտնում է, որ այս պայմաններում հասարակ ժողովրդից շատ բան կախված չէ, հարցը պետք է լուծվի վերելներում՝ հզոր պետությունների, միջազգային կառույցների գրասենյակներում:

Հրանտ Ավետիսյանի կարծիքով՝ անցած տարիներին մեր դիվանագիտությունը պետք է աշխատեր, որ Արցախի կարգավիճակի հարցը անորոշ չմնար:

Կարմիր գյուղն այն եզակի գյուղերից է, որ չնայած ֆերմաներում մեծաթիվ թուրքեր (ադրբեջանցիներ) էին աշխատում, բայց գյուղի ներսում չէին թույլատրում ապրել: Ադրբեջանցիներն ապրում էին գյուղից դուրս, հողափոր հյուղակներում:

Այժմ սովորական են դարձել հարեւան օկուպացված բնակավայրերից լսվող պայթյունի ձայները, ադրբեջանական դիրքերից արձակվող կրակոցները:

Պատերազմից հետո Կարմիր գյուղը վերադարձել է սովորական, առօրյա կյանքին: Գյուղացիները զբաղվում են անասնապահությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ: Ամռան ամիսներին ջրի սակավության խնդիր ունեն: Բայց, ինչպես Արցախի այլ վայրերում, մարդկանց ավելի շատ հուզում է ապագայի, Արցախի կարգավիճակի հարցը:

«Մեր ապագան լուսավոր են պատկերացնում, միշտ լավատես են եղել նման իրավիճակներում, բայց միեւնույնն է, դրոշմը չի փոխվի, իշխանափոխություն չի», - ասում է Հ. Ավետիսյանը:

Կարմիր գյուղի մեկ այլ բնակիչ՝ Սուսաննա Ավետիսյանի կարծիքով, անկախության դեպքում Արցախը կարող է ապրել. «Եթե անկախ լինեց, հնարավոր է այստեղ ապրել, իսկ Ադրբեջանի կազմում անհնար է. Նախիջեւանի նման կամաց-կամաց հայաթափվելու է»:

Նրա հորը ադրբեջանցիները 1974թ. Պատարայի անտառում սպանել են, միայն նրա համար, որ հայ էր: «Բնության պահպանության վարչությունում էր աշխատում, միշտ անտառներում էր: Թուրքերն էլ տեսել են հայ մարդ է, սպանել են, տերեւներով ծածկել: Հորս հետ մի տղա էլ կար ուրիշ հեռավորության վրա, ինքն է տեղը ցույց տվել: Սպանողին դատել են, հինգ տարի են տվել, մեկ-երկու տարի է բանտ նստել: Այդ ամենը հորհրդային միության կազմում: Իմ աչքի առաջ է սա եղել: Այսքանը տեսնելով,

Շարժումը, այսքան զոհը տեսնելով՝ ես թուրքի մասին լավ չեմ կարող մտածել: Նրանց համար հաճույք է հայի արյուն թափելը: Նրանց մեջ դա է մարմավորված, հայի նկատմամբ թշնամությունը միշտ էլ եղել է: Ես չեմ հավատում միասին, համերաշխ ապրելուն, ինչքան էլ ասեն», - ասում է Սուսաննան:



բնակավայրից, իսկ գյուղի «Դերավազ», «Տոնավազ» անվանումները ծագում են Տեր Արտավազ անունով հոգեւոր հոր անունից: Կարմիր գյուղն իր ներկայիս անվանումը ստացել է խորհրդային ժամանակներից, երբ գյուղացիները բերքով լի սայլերը կարմիր դրոշներով տեղափոխում էին շրջկենտրոն:

Արցախյան առաջին պատերազմում երկու անգամ վիրավորված, հարազատ եղբորը կորցրած Հրանտ Ավետիսյանը վերջին պատերազմում թիկունքային աշխատանքներով էր զբաղված, բայց նշում է, որ այն շատ էր տարբերվում նախորդ պատերազմներից:

«Ցավոտ պատերազմ էր, հետեւանք-



Սուսաննա Ավետիսյանը հիշում է, որ նախքան Արցախյան շարժումը գյուղում մի քանի ադրբեջանցի ընտանիք էր ապրում, հիմնականում կովկասցի, հովիվ: Այդ ընտանիքից մի աղջիկ հայերի հետ հայկական դպրոցում է սովորել, հետո բարձրագույն կրթություն ստացել է գյուղում ռուսաց լեզու էր դասավանդում: Պատերազմից բռնկումից հետո վերադարձել է Ադրբեջան ու այնտեղից հակահայկական կոչեր էր անում:

Այս պատերազմի ընթացքում Սուսաննայի մտքով չէր անցնում, որ կարտվենք: Միշտ մեր զինվորներով հպարտանում էր եւ համոզված էր, որ կհաղթենք: «Համ էլ Ադրբեջանը չի կռվել, Թուրքիան է կռվել մեր դեմ», - ասում է նա՝ ավելացնելով, որ ուզում է իր հայրենիքում անվտանգ ու առանց թուրքերի ներկայության ապրել:

S. Աղաջանյան



### Ռազմական ներուժի հավասարակշռությունը

*/Սկիզբը՝ Նախորդ համարում/*  
*Ներկայացնում ենք ամերիկյան բանակի թռչող սարքավորումների արտադրողը Էդուարդ Չ. Էրիքսոնի՝ 2020-ին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծած պատերազմի մասնավորապես Ադրբեջանի ռազմավարական հաջողության պատճառների մասին վերլուծության թարգմանությունը 2-րդ մասը:*  
*«Ապառաժ»-ն ամբողջովին չի կիսում հոդվածում տեղ գտած տեսակետներն ու եզրակացությունները:*

Ռազմավարական ոլորտի տեսանկյունից՝ յուրաքանչյուր խելամիտ համեմատություն պարզ է դարձնում, որ Ադրբեջանն ակնհայտորեն ավելի ուժեղ է Հայաստանից: 2019-ին Ադրբեջանի բնակչությունը կազմում էր 10,3 մլն մարդ, որոնց միջին տարիքը 32.6 տարեկանն էր, երիտասարդների գործազրկության մակարդակը՝ 13.4 տոկոս, ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 4.9 տոկոս, իրական ՀՆԱ-ն՝ 145.2 մլրդ դոլար, իսկ տնտեսության արդյունաբերական հատվածը կազմում էր 53.5 տոկոս: Ադրբեջանն արտահանել էր օրական շուրջ 72000 բարել նավթահումք, ինչպես նաև արտադրել էր մեծ քանակությամբ բնական գազ: Ըստ Կենտրոնական հետախուզական վարչության՝ 2019-ին Ադրբեջանի ՀՆԱ-ի 4 տոկոսը բաժին էր ընկել պաշտպանության բանակին, որը կազմում էր մոտավորապես 67000 ակտիվ ռազմական անձնակազմ՝ 56000 ցամաքային ուժ, 2500 նավատորմ և 8500 օդուժ:

Ի հակադրություն՝ Հայաստանի բնակչությունը 2019-ին կազմում էր 3 մլն մարդ, որոնց միջին տարիքը 36.6 տարեկան էր, երիտասարդների գործազրկության մակարդակը՝ 36.3 տոկոս, ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 32 տոկոս, իրական ՀՆԱ-ն՝ 40.4 մլրդ դոլար, իսկ տնտեսության արդյունաբերական հատվածը կազմում էր 28.2 տոկոս: Ըստ Կենտրոնական հետախուզական վարչության տվյալների՝ 2019-ին Հայաստանի ՀՆԱ - ի 4 տոկոսը բաժին էր ընկել պաշտպանության բանակին, որը կազմում էր մոտավորապես 45000 ակտիվ ռազմական անձնակազմ՝ 42000 ցամաքային ուժ, 3000 օդուժ ու հակաօդային պաշտպանություն:

Ադրբեջանի ժողովրդագրական, տնտեսական, բնական պաշարների և ռազմական առավելությունները միանգամից ակնհայտ են դառնում: Ռազմական առումով ուժերի հավասարակշռությունը խախտվել էր: Ադրբեջանը 3 անգամ գերազանցում էր Հայաստանին՝ համամասնորեն նաև գերազանցելով ողջ ռազմական համակարգին:

Ուժերի տեղակայումը: Ադրբեջանական բանակն օգտագործում է կորպուս-բրիգադ կառուցվածքը, այլ ոչ թե ԱՄՆ-ի կորպուս-դիվիզիոն կառուցվածքը և ունի հինգ բանակային կորպուս: Բանակի կորպուսների շտաբները տեղակայված են հետևյալ կերպ՝ 1-ին կորպուսը՝ Բարդայում, 2-րդ կորպուսը՝ Բեյլազանում, 3-րդ կորպուսը՝ Շամկիրում, 4-րդ կորպուսը՝ Բաքվում, իսկ 5-րդ կորպուսը (առանձին կորպուս)՝ Նախիջևանում: 2020 թվականի ամռանը յուրաքանչյուր կորպուս բաղկացած էր խառը տիպի հինգ բրիգադներից: Բանակն ուներ կազմակերպված, ընդհանուր աջակցության իրենատնու 3 բրիգադ (ունեին հեռահար թնդանոթներ և հրթիռներ), որոնցից երկուսը կցվեցին 2-րդ, իսկ մեկը՝ 5-րդ կորպուսին: Հատկանշական է, որ իրենատնային երեք բրիգադներից երկուսի կցումը 2-րդ կորպուսին ընդգծեց Ադրբեջանի ուժերի ուղղման առաջնահերթությունը:

Ի տարբերություն Ադրբեջանի, որն իր բանակն արդիականացրել էր գերծճգրիտ հարձակողական ռազմական օպերացիաների համար, Հայաստանը ՊԲ-ի համար նախատեսված ռեսուրսներն օգտագործել է պաշտպանական օպերացիաների համար: 21-րդ դարում հայկական օդուժը գնել էր տեղակայվել էր U-300 SAM-ներ, Buk-M1-2 SAM-ներ և Tor-M2KM SAM-եր՝ ստեղծելով ամուր և ճշգրիտ ինտեգրված համակարգ: Ծառքը լրացվեց մեծ քանակությամբ հրթիռազենիթային SAM համակարգերի ձեռքբերմամբ:

Հայաստանը գնեց նաև մի քանի ռուսական ցամաքային հարձակողական օդուժ, որոնք կփոխարինեին խորհրդային ժամանակաշրջանի հնացած օդուժին: Այնուամենայնիվ, հայկական ցամաքային ուժերն իրենց հասանելիք միջոցները ծախսել էին խորհրդային ինտեգրված և իրենատնու արդիականացման, կապի սարքավորումների կատարելագործման և հակատակային համակարգերի հզորացման վրա: Նոր գիտատեսակներից հայկական բանակը ձեռք բերեց ժամանակակից ռուսական «Իսկանդեր-Է» (SS-26) կարճ հեռահարության ցամաքային բալիստիկ հրթիռային համակարգը՝ լրացնելու հնացող Scud-Bs (SS-1C սկադ) և Scarab (SS-21) ցամաքային բալիստիկ հրթիռների համակարգերին:

Հայաստանի հինգ բանակային կորպուսներից չորսը տեղակայված էր Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով: Այսպիսով՝ շփման գծի արեւելյան հատվածի երկայնքով տեղակայված էր երկու կորպուս, իսկ մնացած երկուսը՝ հարավարեւմուտքում՝ Նախիջևանի հատվածում (այսինքն՝ տեղակայված էին հալաբուլ ուղղություններով): Հինգերորդ կորպուսը տեղակայված էր Թուրքիայի հետ սահմանին: Այս իրավիճակն անբարենպաստ էր հայկական բանակի համար, քանի որ չէր կարողանում ուժերի հիմնական մասը կենտրոնացնել հիմնական թշնամու՝ ադրբեջանական բանակի դեմ:

Առանձին, մարտավարական մակարդակով, օկուպացված հայկական Ղարաբաղում (հայերին հայտնի է որպես Արցախի Հանրապետություն) Հայաստանի բանակը պահպանեց դիվիզիոնի չափ անկախ ուժ, որը կոչվում է Արցախի ՊԲ: ՊԲ շտաբը գտնվում է մայրաքաղաք Ստեփանակերտում և բաղկացած է երեք մոտոհրաձգային բրիգադներից, տանկային գնդից և աջակցող այլ միավորներից: Արցախի ՊԲ-ին թեթև գնացված, ծանր հրետանիով, տանկերով և գրահապատ մեքենաներով ապահովում էր իր ծնող հանդիսացող հայկական բանակը:

Վերջին երեսուն տարիների ընթացքում հայկական բանակն Արցախում ներդրումներ է կատարել մեծապես պաշտպանական ամրություններ կառուցելու համար, ինչպիսիք են՝ բունկերները, պաշտպանական հենակետերը, խրամատները և պաշտպանական դիրքերը՝ գրահապատ մեքենաների և իրենատնու համար: Թվում էր լավ ներդրումներ են, քանի որ ամրությունները զգալիորեն ընդլայնեցին բնական, խորհրդանակություններն Արեւելյան Ղարաբաղում: Փաստացի այն դժվարությունները, որոնց ադրբեջանական բանակը հանդիպեց 2016թ.-ի ապրիլյան բախման ժամանակ, կարծես արդարացրեց ծախսերը և կորուստները:

Հակամարտության շարժառիթ: Ի՞նչ կարելի է ասել 2020-ի հայկական բանակի փճակի և տեղակայման մասին: Առաջին հերթին, հարձակման դեպքում նրա ուժերի միայն մի փոքր մասն էր հասանելի պաշտպանելու Ղարաբաղը:

Երկրորդը՝ այն գնված էր գեներով, որն ապացուցվեց՝ քիչ օգուտ է տվել ադրբեջանական բանակի դեմ պայքարում, մասնավորապես՝ հաշվի առնելով Ադրբեջանի ցանցային և թանկ հակաօդային պաշտպանության համակարգը: Հայկական գեներն անօդուտ էին նաև ադրբեջանական փոքր ԱՅՍ-ների և բալիստիկ հրթիռների հետ բախումների ընթացքում: Երկրորդը՝ հայերն այդպես էլ չընդունեցին այն փաստը, որ ադրբեջանական բանակը դարձել էր պրոֆեսիոնալ և ժամանակակից, ինչը հայկական կողմին դարձրել էր չափազանց ինքնավստահ և, գուցե նույնիսկ, ինքնահավան: Գործողը՝ բնածին պաշտպանական մտածելակերպն ու հայկական բանակում առկա գեները չօգնեցին հաջող հարձակողական հակազորներ ձեռնարկել՝ անհապաղ վերականգնելու կորցրած դիրքերը: Ամփոփելով՝ այս գործոնները քայլ առ քայլ պարտության մատնեցին Հայաստանին: Կտեսնեք, որ Ադրբեջանը «բլիթ մյուս մասում» տեղակայել էր առավելապես դեպի ԱՄՆ-ի կառուցվածք ունեցող բանակ, որն ունակ էր գերթամանակակից ԱՅՍ-ների և տեխնոլոգիաների հետ մեկտեղ դասական և ծրագրված պատերազմ վարելու:

#### Ադրբեջանի ռազմական գործողությունների ծրագիրը

Ներկայումս Ադրբեջանի ռազմական իշխանությունները դեռ չեն բացահայտել իրենց ռազմավարության և պատերազմը սկսելու ծրագրի հիմնական նպատակները: Այնուամենայնիվ, բաց աղբյուրներից կա մեծ քանակությամբ տեղեկատվություն իրենց մարտավարության վերաբերյալ և, թե ինչպես է այն փոխվել պատերազմի 44 օրերի ընթացքում: Սրանից հնարավոր է վերականգնել ռազմական գործողությունների նախապայտարասումն և ընդհանուր ծրագրի հիմնական ուղղվածքը: Պետք է իմանալ, որ ռազմական գործողությունները կամ պատերազմը կանխամտածված մարտերի և հարձակումների է շարք է, որի նպատակն է հասնել ռազմավարական արդյունքի: Կարծես թե վերջին պատերազմով նախատեսված էր հայերի կողմից բռնագրավված տարածքների ազատագրումը և Եակն նշանակության ռազմավարական արդյունքի հասնելը:

Ադրբեջանի ծրագրի մանրամասները հասկանալու համար կարևոր նշանակություն ունեն Ղարաբաղի աշխարհագրական տվյալները: Արաքս գետը սկիզբ է առնում Թուրքիայից և հոսում դեպի արևելք՝ դեպի Կասպից ծով: Գետը Իրանի սահմանի երկայնքով հոսում է լեռնային մասով, իսկ հետո Հարավային Ղարաբաղում ձեռնվորում է ընդարձակ և հարթ հովիտ: Թեև Արաքսի հովիտը և դրա հետեւում գտնվող գյուղերը Արցախի ՊԲ-ի կողմից ուժեղ պաշտպանված էին, Ադրբեջանի համար վերջիններս թիրախային կետեր էին: Այս բաց տարածքում մեծ քանակությամբ ուժեր կարող են տեղակայվել և մասնավոր: Ղարաբաղի մնացած հատվածը բարձրադիր լեռնային դիրքում է, և այդ տեղերում հնարավոր չէ լայնածավալ ռազմական գործողություններ իրականացնել:

Խորհրդարանը տեղանքները, հայերին առավելություն տալուց բացի, նաև կարևոր ռազմավարական նշանակություն ունեին Արցախի ՊԲ-ի համար (Լաչինի միջանցքի պահպանման համար): Միջանցքը, որը ձգվում է Հայաստանի հետ սահմանակից Լաչին քաղաքից մինչև Ստեփանակերտ, Հայաստանը Ղարաբաղին կապող միակ ճանապարհն է: Հետեւաբար, վերահսկելով

Արաքսի հովիտը և Լաչինի միջանցքը (կամ՝ հնարավորություն ունենալ խափանել միջանցքի երթևեկությունը)՝ արդյունավետորեն արգելափակվում է ապրանքների մուտքը Արցախ: Այս պահին Եակն և հասկանալ նաև Ծուշի քաղաքի դիրքը, որը գտնվում է բարձրադիր հատվածում՝ Լաչին-Ստեփանակերտ ճանապարհին: Ուստի, Ծուշին դառնում է այն աշխարհագրական բանալի կետը, որի վերահսկողության դեպքում գործնական հաջողություն կապահովվի:

Պատերազմ ծրագրող յուրաքանչյուր մարդ, որպես թիրախ, միանգամից կընտրեր Լաչինի միջանցքը՝ գրավելով կամ վերահսկելով դեպի Ստեփանակերտ տանող միակ ճանապարհը՝ այդպիսի մեկուսացնելով Արցախը: Արցախի մեկուսացումը ադրբեջանցի բանակցողներին հնարավորություն կտար բարենպաստ դիրքերից թելադրել կարգավորման կամ հրադադրի վերաբերյալ իրենց պայմանները: Պատերազմ ծրագրավորողները նաև հաշվի կառնեին, որ ձմեռային եղանակային պայմանները կխոչընդոտեն և կսահմանափակեն իրենց մեծաքանակ ԱՅՍ-ների աշխատանքը: Մինչև ձմեռ պատերազմի ավարտը նաև կխափաներ հայերի հակահարձակողական գործողությունները, ավելին՝ թույլ չէր տա ռուսական զորքերի միջամտությունը: Ուստի, հավանական է՝ ուշ նոյեմբերին պատերազմի ավարտը ծրագրի մի մասն էր: Ադրբեջանի պատերազմի ծրագիրը բաղկացած էր 2 փուլից. հիմնական շեշտը դրված էր հարավային հատվածի վրա: Հավանաբար, առաջին փուլում նախատեսվում էր գրավել Արաքսի հովիտը և հետագա գործողությունների համար այնտեղ հենակետ հիմնել: Այս փուլում փոքր և աջակցող հարձակումներ կլինեին Արցախի հյուսիսում և արեւմուտքում, որպեսզի ՊԲ ուժերը մասն իրենց տեղերում և չկարողանան նոր ուժեր ուղարկել Ադրբեջանի համար կարևոր նշանակության կետը: Երկրորդ փուլում նախատեսվում էր գրաված տարածքից շարժվել դեպի հյուսիս՝ լեռնային մասը, և կտրել Լաչինի միջանցքը: Միջանցքին տիրապետելը կնշանակեր ռազմական իրադրության ավարտ, և Ադրբեջանին հնարավորություն կտար պահանջել հրադադար կամ առաջ քաշել կարգավորման իր ծրագիրը: Ձախողման դեպքում Ադրբեջանն առավել բարենպաստ դիրքում կլիներ և մինչև 2021-ի գարունը կնվաճեր Արցախը:

Ադրբեջանի ռազմական ծրագրի առանցքային կետն այն էր, որ բանակն ունակ էր ծրագրել և իրականացնել սահմանափակ քանակությամբ խոր մարտեր:

Ինչպես նկարագրվելու է հետագայում, հայկական հաղորդակցության ուղիների թիրախավորումը վկայում է այն մասին, որ ադրբեջանցիները մտադիր էին մեկուսացնել Արցախի ՊԲ մարտավարական կետերը՝ բալիստիկ հրթիռների, հատուկ նշանակության զորքերի և հեռահար ԱՅՍ-ների կիրառմամբ: 2020 թվականի աշնան Ադրբեջանն Արցախի օդը ողողեց ԱՅՍ-ներով ոչ այն պատճառով, որ բախտն էր բերել: Նախորդ սասնամակում ադրբեջանցիները նպատակադրված ձեռք են բերել որոշակի տեսակի գեներ, վերապատրաստել որոշ ստորաբաժանումների հատուկ գործողությունների համար, միասնաբար մշակել պատերազմի ծրագիր, որպեսզի մեկուսացնեն մարտադաշտը: Նրանք սպասել են հարմար առիթի, որ կարողանան այս ամենը միասին իրագործել:

*/Հարունակելի/*  
**Թարգմանեց Լ. Իշխանյանը**

«Ապառաժ» երկշաբաթաթերթ  
 Ստեփանակերտ, Կոնույանցների 17,  
 հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com  
 Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաև նյութեր, որոնցում արժարժեք չունենալուց չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԿ ԴԼՅՈՒՄ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 800: Գինը՝ 100 դրամ:

**Խմբագիր**  
**Ա. Պուլույան**